

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱԶԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՄԲ ՄԵԿՆԵՅԱԻ ՌՈՒՄԻԱ՝ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ ՌՈՒՄԻՈՅ ՆԱԽԱԳԱԶԻՆ

Երեքշաբթի, 14 Մարտին երեկոյան Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ պաշտօնական այցելութեամբ մեկնեցաւ Ռուսիոյ մայրաքաղաք Մոսկուա:

Մոսկուայի միջազգային ֆնտքովա օդակայանին մէջ Նախագահը ընդունեց Նախագահ Փութինի յատուկ ներկայացուցիչ Միխայլ Պոկտանովը, արտաքին գործոց փոխնախարար Ալեքսանտր Եֆիմովը, Դամասկոսի մէջ Ռուսիոյ դեսպանն ու Ռուսիոյ մէջ Սուրիոյ դեսպան Պաշար ալ-Ճաաֆարին:



Սուրիոյ Նախագահին կ'ընկերակցէր Նախարարական պատուիրակութիւն մը:

Նախագահի առաջին այցելութիւնը անյայտ զինուորի գերեզմանն էր, ուր ան ծաղկեպսակ գետեղելով հայրենիքի պաշտպանութեան նուիրուած Նահատակներուն յիշատակը յարգեց:

ՆԱԽԱԳԱԶԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐՈՎ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐԸ 10 ՏԱՐՈՒԱՆ ՎԱՐԿ ՊԻՏԻ ՏՐԱՄԱԴԵՆ ԵՐԿՐԱՇԱՐԺԵՆ ՏՈՒՇԱՍՆԵՐՈՒՆ

Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ հրապարակեց 2023-ի 3 թուականի հրամանագիրը, որուն համաձայն Սուրիան ցնցած երկրաշարժէն տուժածները տուգանքէ, շահատուրքէ եւ իրենց բնակարաններուն, շէնքերուն կամ խանութներուն վերականգնումի արտօնագրեր ապահովելու ծախսերէն զերծ պիտի կացուցուին մինչեւ 31 Դեկտեմբեր 2024:

Հրամանագիրին յօդուածներէն մէկը կը նշէ, որ սուրիական պետական դրամատուները մինչեւ 200 միլիոն ս.ո. -ի հասնող 10 տարուան վարկ պիտի տրամադրեն երկրաշարժէն տուժածներուն, որպէսզի անոնք կարողութիւն ունենան բնակարաններու ամբողջական կամ մասնակի վերաշինութեան, կամ ամբողջական կամ մասնակի վերականգնումին: Վարկը զերծ պիտի ըլլայ հարկերէ, իսկ առաջին մասնավճարը պիտի փակուի վարկը ստանալէ 3 տարի ետք:

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՄԲԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ



Մի քանի օրից կը լրանայ Արցախի Հանրապետութեան 120 հազար բնակչութեանը Ատրպէյճանի կողմից շրջափակելու 100 օրը: Արհամարհելով Արցախի ապաշրջափակման վերաբերեալ Լա Յէյի միջազգային դատարանի որոշումը՝ Ատրպէյճանի դեկավարութիւնն ուժի սպառնալիքով եւ կիրառմամբ շարունակում է Արցախը հայաթափելու քաղաքական ուղեգիծը:

Արցախի Հանրապետութիւնն իրեն բռնակցելու մտադրութեան մէջ Ատրպէյճանը չի խորշում հակամարդկային միջոցներից եւ ահաբեկչական գործողութիւններից: Բնական կազի եւ էլեկտրականութեան մատակարարման խափանումները, խաղաղ բնակչութեան ահաբեկումն ու ազատ տեղաշարժի սահմանափակումները, իսկ վերջերս էլ՝ Մարտի 5-ին, իրենց ծառայողական պարտականութիւնները կատարելու ժամանակ ոստիկաններին գնդակահարելու փաստը գալիս են ապացուցելու, որ նման պայման-

Շար.՝ էջ 3 >

ՅԵՏ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՆ, ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՀՈՎՈՒԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԾՈՎԱՓՆԵԱՅ ՇՐՋԱՆ

Երկրաշարժի հետեւանքներուն եւ անոնց յաղթահարման համար տարուող աշխատանքներուն մօտէն հետեւելու համար, Ուրբաթ, 10 Մարտ 2023-ին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ.



Եպս. Ազգարեան հովուական այցելութիւն տուաւ ծովափնեայ շրջան, ընկերակցութեամբ՝ Ազգ. Վարդութեան ատենապետ մեթո Սունայու Սունայուլեանի եւ ազգային Վրէժ Եագուպեանի:

Սրբազան Հայրը Նախ այցելեց Լաթաքիա եւ հանդիպում ունեցաւ Լաթաքիոյ եւ Ծովափնեայ շրջանի հոգեւոր հովիւ արժանապատիւ Տէր Վազգէն Զինյ. Զեօշկերեանի, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Թաղա-
 Շար.՝ էջ 12 >

ՀՅՂ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՆԱԽԱՉԵՆՈՒԹԵԱՄԲ ՀԱԼԵՂ ՀԱՍԱԻ ԼԻԲԱՆԱՆԱԶՅՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆՊԱԿՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 12 Մարտի յետմիջօրէին, Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցի հասաւ լիբանանահայութեան կողմէ առաքուած մարդասիրական օժանդակութիւնը:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ մուտքին պատուիրակութիւնը դիմաւորեցին Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Մակար եպս. Ազգարեանը, թեմի Նպաստից մարմինի ներկայացուցիչներն ու պատասխանատու ազգայիններ:



Նոյն բռնակառքով առա-



քուած էր Նաեւ «Ճիւղեան» հիմնարկի ապահոված նպաստը:

Պատուիրակութիւնը կը գլխաւորէր ՀՀԿ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի: Պատուիրակութեան մաս կը կազմէր Նաեւ Կեդրոնական Կոմիտէի անդամ Ալպեր Պալապանեան: Երեսփոխան Բագրատունի այս առիթով ըսաւ. «Երկրաշարժի առաջին օրէն լիբանանահայութիւնը եւս տագնապեցաւ: Մենք կապի մէջ էինք տեղւոյն պատասխանա-

Շար.՝ էջ 12 >

Խմբագրական

ՍՈՒՐԻԱ-ՌՈՒՍԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատի երկրաշարժէն վերջ Միջին Արեւելքէն դուրս պաշտօնական առաջին այցելութիւնը եղաւ Ռուսիա:

Նախագահը նախ այցելեց անյայտ զինուորին շիրիմը: Այցելութիւն մը, որ վեր կ'առնէր հայրենիքի պաշտպանութեան կարեւորութիւնը յատկապէս նախագահի մը կողմէ, որուն երկիրը աւելի քան տասը տարիէ ի վեր կը դիմագրաւէ պատերազմն ու երկրի մասնատման ուղղուած տարբեր ուժերու նկրտումները:

Նախագահ Փութինի հետ հանդիպման ընթացքին Սուրիոյ նախագահը շեշտը կը դնէր գլխաւորաբար Ռուսիա-Սուրիա բազմաշերտ, յատկապէս տնտեսական, յարաբերութիւններու զարգացման, Սուրիոյ տարածքային ամբողջականութեան պահպանման համար Ռուսիոյ հաստատ կեցուածքին, ինչպէս նաեւ երկրաշարժէն ետք Ռուսիոյ ցուցաբերած օժանդակութեան վրայ:

Սուրիոյ նախագահը կը շեշտէր, որ թէեւ Սուրիա-Ռուսիա յարաբերութիւնները արագ կշռոյթով կը զարգանան, սակայն միջազգային գետնի վրայ արձանագրուող փոփոխութիւնները կը պահանջեն մշտական հանդիպումներ, որպէսզի համադրուին այս փուլին առնչուող երկու երկիրներուն քաղաքական պատկերացումները:

Իսկ ինչպիսի՞ փոփոխութիւններ տեղի կ'ունենան տարածաշրջանին մէջ...

Քաղաքական բեմի վրայ մէկ կողմէ Չինաստան կը փորձէ կարգաւորել Սեւտական Արաբիա-Իրան յարաբերութիւնները, միւս կողմէ Ռուսիա աշխատանք կը տանի իր միջնորդութեամբ Սուրիա-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման ենթահողը պատրաստելու:

Նախագահներ Փութին-Ասատ հանդիպման ընթացքին Սուրիոյ նախագահին խօսքը թէ Սուրիոյ ժողովուրդին ու կառավարութիւնը երախտապարտ են Ռուսիոյ՝ Սուրիոյ տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը յարգող իր կեցուածքներուն համար, յստակօրէն կը ցուցնէր Սուրիոյ այն մօտեցումը, որ Սուրիա-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման նախապատրաստման առաջնային պայմանը թրքական ուժերուն սուրիական հողերէն դուրս գալն ու երկրի ներքին հարցերուն չմիջամտելն է:

Վերջին օրերուն լրատումիջոցներ շրջանառութեան մէջ դրին Մոսկուայի միջնորդութեամբ Սուրիա-Թուրքիա-Իրան-Ռուսիա քառեակին հանդիպման հաւանականութիւնը՝ 15-16 Մարտին, Մոսկուայի մէջ:

Կը թուի, թէ նախագահ Ասատի հանդիպումն ու զրոյցը Ռուսիոյ նախագահին հետ պիտի ընդգրկէ այս օրակարգին տարբեր կողմերու քննարկումը, այնպէս ինչպէս ռուս-սուրիական գործակցութեան զարգացումը տարածաշրջանի տարբեր հարցերու լուծման ի խնդիր:

Արաբական Ծոցի եւ Միջին Արեւելքի մէջ Չինաստանի եւ Ռուսիոյ տնտեսական թէ քաղաքական ներկայութեան զարգացումը բնականաբար դրականօրէն պիտի անդրադառնայ Սուրիոյ վրայ՝ վերականգնելու Սուրիոյ քաղաքական-դիւանագիտական յարաբերութիւնները մէկ կողմէ, երկրի տնտեսութիւնը միւս կողմէ, միեւնոյն ատեն նպաստելով երկրաշարժի հետեւանքներու յաղթահարման:

Սուրիոյ համբերատար դիւանագիտութիւնը կը թուի յաղթահարած ըլլալ երկիրը մեկուսացնելու տարբեր ուժերու նկրտումները: Արաբական երկիրներու Սուրիոյ հետ յարաբերութիւններու բնականոնացման ճիգերը երկրաշարժին յաջորդող օրերուն, ինչպէս նաեւ Սուրիոյ ռազմավարական դաշնակից Իրանի եւ Սեւտական Արաբիոյ յարաբերութիւններու կարգաւորումը բարերար դեր կրնան ունենալ սուրիական տագնապի քաղաքական լուծման ու Սուրիոյ աշխարհաքաղաքական դերին ու տնտեսութեան վերականգնումին մէջ:

Միջին Արեւելքի եւ Ծոցի երկիրներուն մէջ Չինաստանն ու Ռուսիան տագնապները եւ յարձակողապաշտ մօտեցումները մեղմացնելու եւ տարբեր ուղղութիւններով գործակցութեան առանցքներ ստեղծելու աշխատանքի լծուած են՝ վերջ տալու աշխարհի միաբերեւեռ կառավարման նկրտումներուն եւ իրենց ներկայութեան ազդեցութիւնը ընդլայնելու:

«Գ.»

-Յայաստանի մէջ Սուրիոյ Յանրապետութեան դեսպան դուկտ. Նորա Արիսեան ընդունեց 8 Փետրուար 2023-ին Յալէպ ժամանած Յայաստանեան փրկարարական որոնողական խումբի հրամանատար Արմէն Գեորգեանը եւ ՅԱԳ Նախարարութեան ներկայացուցիչ, դիւանագետ Սկըրտիչ Կարապետեանը, որ խմբակին ընկերակցեցաւ Յալէպ եւ ՅԱԳ Նախարարութեան Միջին Արեւելքի վարչական տնօրէն Արսէն Առաքելեանը՝ խումբին շնորհակալագիր ներկայացնելու, առ ի գնահատանք Սուրիան ցնցած երկրաշարժին հետեւանքով փուլ եկած շէնքերուն տակէն գոհեցու դուրս բերման իրենց մարդասիրական աշխատանքին:



Դուկտ. Արիսեան երախտագիտութիւն եւ շնորհակալութիւն յայտնեց խումբին տարած մարդասիրական աշխատանքին համար, ինչպէս նաեւ շնորհակալութիւն յայտնեց Յայաստանի Յանրապետութեան՝ Սուրիոյ ժողովուրդին գօրավիզ կանգնելուն, մասնագիտական փրկարարական-որոնողական եւ մարդասիրական օգնութիւններ ուղարկելով, ինչպէս նաեւ ՅԱԳ Նախարարին Սուրիա այցելութեամբ:

-Սուրիոյ խորհրդարանը Երեքշաբթի, 14 Մարտին վարչապետ Արնուսի գլխաւորութեամբ գումարուած իր շաբաթական նիստին քննարկեց երկրաշարժի հետեւանքներուն առնչուող ծառայողական, տնտեսական եւ այլ հարցեր, ինչպէս նաեւ նախագահական 3 թուակիր հրամանագիրին գործադրութեան մանրամասնութիւնները:



Արնուս ընդգծեց, որ բոլոր նախարարութիւնները եւ առնչակից մարմինները պէտք է ստոյգ տուեալներով եւ թիւերով կատարեն իրենց վստահուած դերերը՝ աղէտեալ վայրերու մէջ իրականացնելու եւ ի գործ դնելու որոշումը՝ վնասուած ճաքքած շէնքերու վերականգնումին ու ամրացման եւ աշխատանքներու շուտափոյթ իրականացման առումով:

Արնուս նախարարութիւններէն պահանջեց, համաձայն իրենց աշխատանքի ծիրին, հրամանագրին բոլոր յօդուածները շուտափոյթ ձեւով ի գործ դնել, դիտել տալով որ այս հրամանագրին շնորհիւ կարելի պիտի ըլլայ աղէտեալ ժողովուրդի բնակարանային եւ աշխատանքային շարք մը հարցեր լուծել յառաջիկայ օրերուն:

-Ռուս դիւանագետներ եւ քաղաքական վերլուծաբաններ, ինչպէս ռուս դիւանագետներու միութեան նախագահ Անտոն Փակլանով, Ռուսիոյ արտաքին եւ պաշտպանական քաղաքականութեան խորհուրդի մասնագետ Տիմիթրի Սոսլով, Ռուսիոյ ԱԳ Նախարարութեան ենթակայ դիւանագիտական ակադեմիոյ ազգային եւ միջազգային անվտանգութեան բաժնի նախագահ Օլէկ Էվանով եւ ուրիշներ, շեշտեցին Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատին Ռուսիա տուած այցելութեան կարեւորութիւնը, հաստատելով, որ սոյն այցելութեամբ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւնը պիտի ամրապնդուի եւ յառաջացում պիտի արձանագրէ տարբեր ոլորտներու մէջ: Անոնք սոյն այցելութիւնը կարելի համարեցին Ռուսիոյ եւ անոր բարեկամ երկիրներուն համար:




-Զորքշաբթի, 15 Մարտի առաւօտուն, Բերիոյ Յայոց Թեմի Նպաստից Մարմինը սկսաւ մեր ժողովուրդի գաւակներուն բաշխել երկրաշարժի յաջորդող օրերուն հասած մարդասիրական օժանդակութիւնները:



Օժանդակութիւնները պիտի բաշխուին մեր ժողովուրդի բոլոր գաւակներուն, հանգրուանաբար, Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահէն ներս:

-Համաշխարհային սակարանէն ներս ունկիւն գինը 1913 ԱՄՆ տոլարի բարձրանալուն գուգահեռ, սուրիական շուկային մէջ անոր գինը աննախընթաց աճ արձանագրեց:



Դամասկոսի Ոսկերիչներու Միութեան հրապարակած ցուցակին համաձայն, 21 կարատ ոսկիին մէկ կրամին գինը հասաւ 390.000 ս.ո. -ի, իսկ 18 կարատ ոսկիի մէկ կրամին գինը՝ 334.286 ս.ո. -ի:

Լուրեր Հայաշխարհին

ՓՈՒԹԻՆ՝ ՓԱՇՏԵԱՆԻՆ «ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՄԵԶ Ի ՅԱՅՏ ԵԿԱԾ ԲՈՒՈՐ ՀԱՐՅԵՐԸ ԱՆՀՐԱԾԵՇՏ Է ԼՈՒԾԵԼ ԿԱՌՈՒՅՈՂԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ՝ ԽԱՂԱՂԱՊԱՆՆԵՐՈՒ ՇԵՏ ԿՈՂՄԵՐՈՒ ՓՈԽՊՈՐՇԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԵԶ»

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան քննարկած են Ռուսիոյ, Հայաստանի եւ Ատրպեյճանի ղեկավարներու միջեւ ձեռք բերուած համաձայնութիւններու կատարման ընթացքը՝ սահմանին անվտանգութեան ապահովման քայլերը, յայտնած է Զրեմլինի մամուլ ծառայութիւնը:



«Հայկական կողմի նախաձեռնութեամբ Ռուսիոյ Դաշնութեան նախագահ Վլատիմիր Փութին հեռաձայնային գորոջ ունեցած է Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ: Դիտարկուած են 2020-2022 թուականներուն Ռուսիոյ, Հայաստանի եւ Ատրպեյճանի ղեկավարներուն միջեւ յայտնի համաձայնագրերու ամբողջ համալիրի իրականացման գործնական տուեալները՝ հայ-ատրպեյճանական սահմանին կայունութեան եւ անվտանգութեան ապահովման, տարածաշրջանի մէջ տնտեսական եւ երթելեկային կապերու վերականգնումին, Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի նախապատրաստման ուղղուած քայլերը», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

«Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած իրավիճակի քննարկումի ժամանակ Վլատիմիր Փութին ընդգծած է բոլորի յայտ եկած հարցերը կառուցողական կերպով լուծելու անհրաժեշտութիւնը՝ ռուս խաղաղապահներու հետ կողմերու սերտ շփման եւ փոխգործակցութեան պայմաններու մէջ», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

ՊԵՆՏԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱԾ Է ՀՅՂ ԵՐՈՂԱՅԻ ՀԱՅ ՂԱՏԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐՈՒՆ ՇԵՏ

6 Մարտին Պեյքիքայի Արտաքին գործոց նախարար Հաջա Լահայիպ ընդունած է ՀՅՂ Երոզայի Հայ դատի գրասենեակի նախագահ Գասպար Կարապետեանը, գործադիր տնօրէն Յեղիսէ Էվինեանը եւ ՀՅՂ Պեյքիքայի Հայ Դատի Յանձնախումբի նախագահ Կարո Կարապետը:



Հանդիպման ընթացքին ՀՅՂ Երոզայի Հայ Դատի գրասենեակի ներկայացուցիչները մանրամասնութիւններ փոխանցած են Արցախի բնիկ հայ բնակչութեան նկատմամբ ատրպեյճանական կողմէն իրականացուող ցեղային զտումներու քաղաքականութեան մասին եւ անհրաժեշտ համարած են Ատրպեյճանի իշխանութիւններուն վրայ ճնշում բանեցնել՝ դադարեցնելու այս խիստ ապակառուցողական եւ ապակայունացող քաղաքականութիւնը:

ՀՅՂ Երոզայի Հայ Դատի գրասենեակի ներկայացուցիչները ընդգծած են Հայաստանի Հանրապետութիւնու Արցախի հետ կապող Լաչինի միջանցքի շրջափակման անյապաղ բացման անհրաժեշտութիւնը, դիտել տալով, որ 9 Նոյեմբեր 2020-ի հրադադարի մասին համաձայնագրով Ատրպեյճան պարտաւորուած է Լաչինի միջանցքով ապահովել մարդկանց եւ ապրանքներու ազատ եւ անվտանգ տեղաշարժը երկու ուղղութիւններով:

ՀՅՂ Երոզայի Հայ Դատի գրասենեակի ներկայացուցիչները ընդգծած են նաեւ Ատրպեյճանի կողմէ անօրինական գերութեան մէջ գտնուող հայ ռազմագերիները անյապաղ ազատ արձակելու անհրաժեշտութիւնը:

Որպէս երոզական քաղաքացիական հասարակութեան կազմակերպութիւն, որ ունի յանձնախումբ նաեւ Պեյքիքայի մէջ, ՀՅՂ Երոզայի Հայ Դատի գրասենեակի ներկայացուցիչները վերահաստատած են իրենց վրճարականութիւնը՝ ամէն ջանք գործադրելու նպաստելով Հայաստանի եւ Պեյքիքայի միջեւ կապերու ամրապնդման:

Հանդիպումը ընթացած է ջերմ եւ հիւրընկալ միջավայրի մէջ, ձեռք բերուած է համաձայնութիւն հետագայ համագործակցութեան:

ՀՅՂ Բիւրոյի Հայ Դատի կեդրոնական գրասենեակ 11 Մարտ 2023

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ...

Սկիզբ՝ 1ջ 1

Ներում անընդունելի են ուղիղ երկխօսութեան մասին խօսակցութիւնները: Միեւնոյն ժամանակ, համոզուած ենք, որ դարաբաղեան հակամարտութիւնը, որպէս միջազգային օրակարգի հարց, պետք է լուծուի բանակցութիւնների միջոցով համապատասխան միջազգային կառոյցների միջնորդութեամբ ու երաշխիքներով, մասնաւորապէս, այդպիսի լիազօրութեամբ օժտուած Միսքի խմբի համանախագահ երկրների ներգրամամբ:

Ատրպեյճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը քարոզչական տարբեր հնարքներով ապատեղեկացնում է սեփական հանրութեանն ու միջազգային կառոյցներին՝ նպատակ ունենալով Արցախի ժողովրդի դէմ կիրառուող մարդկային ճնշումների եւ ահաբեկումների պայմաններում պատրանք ստեղծել «խաղաղութեան դարաշրջանի» մասին:

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի խմբակցութիւնները, արտայայտելով ժողովրդի կամքն ու դիրքորոշումը, պահանջում են Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւններից հաւատարիմ մնալ ՀՀ Գերագոյն Խորհրդի 1992թ. Յուլիսի 8-ի որոշմանը եւ կասկածի տակ չդնել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը:

Արցախի խորհրդարանի բոլոր խմբակցութիւնները վերահաստատում են իրենց հաւատարմութիւնը մեր ժողովրդի կամքն արտայայտող հիմնարար փաստաթղթերին եւ շարունակելու են առաջնորդուել դրանցից բխող գաղափարներով եւ սկզբունքներով:

- «Ազատ Հայրենիք-ԸՄԴ» խմբակցութիւն
 - «Միասնական Հայրենիք» խմբակցութիւն
 - «Արդարութիւն» խմբակցութիւն
 - «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» խմբակցութիւն
 - «Արցախի ժողովրդավարական Կուսակցութիւն» խմբակցութիւն
- 13 Մարտ 2023
Ստեփանակերտ

Հայաստան ՀԱՊԿ-ի Ընդհանուր Բարձրագոյն Տեսանկյունի Իր Գագաթին Եւ Հրաշխարհային Հրահրուող Մտայնութեամբ Եւ Ներկայացուցչութեամբ

Հայաստան Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) ընդհանուր քարտուղարի տեղակալի իր չափաբաժիններն հրաժարելու առաջարկ ներկայացուցած է: «Արմէնփրես»-ին այս մասին յայտնեց Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան մամուլ քարտուղար Վահան Յունանեան:



«Այո՛, մենք համապատասխան առաջարկներ կայացուցած ենք ՀԱՊԿ-ին», «Արմէնփրես»-ի հետ գրոյցի ընթացքին ըսած է Յունանեան՝ արձագանգելով մամուլին մէջ շրջանառուող լուրերուն, թէ Հայաստան հրաժարած է ՀԱՊԿ-ի ընդհանուր քարտուղարի տեղակալի իր չափաբաժինէն:

ՀՅՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՄԲ ՄՈՍԿՈՒԱ ԿԸ ԳՏՆՈՒՆ

ՀՅՂ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան եւ ՀՅՂ Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէեան աշխատանքային այցելութեամբ մեկնած են Ռուսիա:



12 Մարտին այցելութիւնը մեկնարկած է Ռուսիոյ Նոր Նախիջեանի Հայոց Թեմի Առաջնորդ Եգրաս Արքեպիսկոպոս Ներսիսեանի հետ հանդիպումով, ապա Արմէն Ռուստամեան եւ Իշխան Սաղաթէեան մասնակցած են Մոսկուայի մէջ ՀՅՂ հիմնադրութեան 133-ամեակին նուիրուած նախաձեռնութեան:

ԻՆՉՊԵՍ ԲԱՅԱՏՐԵԼ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԿՐԱԴՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ...

Կարո Արմենյան

Իրերու ներկայ դրություն մեջ, հայ քաղաքական միտքը պարտաւորւած է այս հարցումին տալու իրապաշտ, խորքային, համակողմանի եւ անկեղծ պատասխան, քանի որ Ռուսաստանի դերը միշտ եղած է կենսական եւ առանցքային հայ անկախ պետականութեան լինելիութեան եւ մեր ժողովուրդի գոյութեան համար: Ան կենսական է մանաւանդ այսօր:

Ճիշդ կամ սխալ՝ հայ անկախ պետականութիւնն ու ժողովուրդը դրած են շատ մեծ գրաւ մը ռուսական ուժի կենսականութեան վրայ: Պատմական մեծ յանձնառութիւն մը՝ որ վաղուց անցած է քաղաքականութենէն անդին եւ դարձած է մշակոյթ, դարձած է լինելիութեան գրաւական: Զետեւաբար մեր կապը Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան եզրերուն հետ պարագայական չի կրնար ըլլալ: Մենք պիտի վերաբերինք Մոսկուայի արտաքին քաղաքականութեան հետ «տիրոջ» իրաւունքներ ունեցողի մտայնութեամբ եւ կեցուածքով: Առաւել եւս այսօր՝ երբ մենք, - Փաշինեանական իշխանութեան քաղաքականութեան հետեւանքով, - մեծ չափերով կորսնցուցած ենք այդ կապը: Այսօր, մեր առջեւ դրուած խնդիրը հետեւեալն է: Նկատի առնելով, որ բացառապէս բախտորոշ եւ կենսական է մեր կապը Ռուսիոյ արտաքին քաղաքականութեան հետ, նոյնքան կենսական է, որ այդ կապը տարածուի Ռուսիոյ ներքին քաղաքականութեան ոլորտէն ներս: Չի բաւեր ըսել, որ Ռուսիան մեր ռազմավարական դաշնակիցն է եւ հոն կանգ առնել: Պայման է, որ մենք լիարժեքօրէն «յանձն առնենք» այդ կենսական փոխյարաբերութիւնը եւ տանիք հոն, ուր մեր ազգային գերագոյն շահերն են իրենց բարդ կառուցուածքով:

Եզրակացութիւն: Ռուսիոյ հետ այսպիսի որոշիչ եւ կենսական փոխառնչութիւններով ապրող Զայաստանը, վաղուց պէտք էր «նստած» ըլլար Մոսկուայի ներքին քաղաքական կեանքի մայրուղիին վրայ եւ իր գոյութիւնը արմատաւորած: Փաստը այն է, որ այդ մէկը տեղի չէ ունեցած: Եթէ պիտի ընդունինք, որ Ռուսաստանը մեր ռազմավարական դաշնակիցն է, կարելի է, որ (ա) յստակօրէն սահմանենք, թէ ի՞նչ կը նշանակէ, այս պարագային, «ռազմավարական դաշնակից» իմացութիւնը, (բ) վստահ ըլլանք, որ մենք եւ այդ դաշնակիցը նոյն սահմանումէն բխող վարքագծով կը գործենք իրական կեանքի մէջ եւ (գ) ընենք այնպէս, որ այդ փոխ-յարաբերութիւնը ամրապնդուած ըլլայ լծակային շօշափելի եւ ազդու հակակշիռներով... Ռազմավարական որեւէ դաշինք միշտ ալ եղած է ապրող օրկանիզմ, որ ենթակայ է ամբարշտ պերպարանափոխութիւններու եւ մաշումի: Չայն պէտք է դիտել, զայն պէտք է քննարկել ամէն օր, զայն պէտք է ապահովել նորանոր գործիքներով եւ զայն վերածել փոխ-սնուցիչ (symbiotic) կենսագործօնի:

Հասուն պետութիւններու վերին վարչամեքենային մէջ գոյութիւն ունի Անվտանգութեան Պետի հաստատութիւնը՝ յարակից Անվտանգութեան Խորհուրդով: Այս կառույցներու առաքելութիւնն է յիշեալ երկրի ռազմավարական դաշինքներու ամբարշտ վերահսկողութիւնը: ԱՄՆ-ի նախագահի շուրջօրեայ խնդիրն է այս ոլորտի քննարկումն ու հարցերու տնօրինումը: Արեւը երբեք մայր չի մտներ որեւէ երկրի ռազմավարական համակարգի կենսագործունեութեան վրայ:


Բոլոր երեւոյթները ցոյց կու տան, որ մենք չարաչար թերացած ենք «ռազմավարական դաշնակից» ձեւաւորելու այս բարդ ու բազմաշերտ գործին մէջ: Կը պարզուի, որ մեր դիւանագիտութիւնը Մոսկուայի մէջ եղած է թոյլ, մակերեսային եւ ոչ-համապատասխան մեր ազգային առաջնահերթութիւններուն: Թող ներուի ինծի ըսել, որ մենք եղած ենք սնանկ նոյնիսկ ճամբայ ելլելէ առաջ:

Փոխարէնը՝ Ալիեւ ըրած է ճիշտ հակառակը: Իր ռազմանիւթային հըսկայածաւալ գնումները ան վերածած է լծակային ուժի եւ... գործնականօրէն գրաւած է Մոսկուան: Այդ ծաւալի առեւտրական յարաբերութիւնները որեւէ երկրի հետ (եւ յատկապէս Ռուսաստանի), իրենց եութեամբ, կը դարդին գուտ առեւտրական ըլլալէ եւ կը վերածուին քաղաքականի: Յետոյ նաեւ ռազմավարականի: Յետոյ նոյնիսկ գոյութեան կանխիկ: Անոնք կը ստեղծեն մագնիսութեան հզօր դաշտեր: Շուկան կը վերածեն իսկական ռազմադաշտի: Ալիեւը իր մեծագումար գնումներով ոչ միայն սպարագինեց իր բանակը, այլեւ Ռուսաստանէն գնումի իր գործողութիւններով իսկ ան պատերազմ մղեց Զայաստանի եւ Արցախի դէմ... Ան իր պատերազմը յաղթանակով պսակեց ռազմական գործողութիւններ սկսելէ շատ առաջ: Ան մեր հացը մեր ձեռքէն խլեց Մոսկուայի մէջ իսկ: Եւ ան ամուր խցեց Մոսկուայի դռները մեր առջեւ:

Պետք է ենթադրել աւելին: Այսպիսի սերտակցութիւնը կողմերու միջեւ (այս պարագային Ալիեւի եւ Մոսկուայի) միշտ ալ կ'առաջնորդէ յատուկ անձնական յարաբերութիւններու: Պետք է անվարան ակնկալել, որ առեւտրական յարաբերութիւններուն գուգահեռ ձեւաւորուած ըլլան շատ յատուկ անձնական շահեր Մոսկուայի establishment-ին եւ Ալիեւի միջեւ: Պետք է ենթադրել, որ այդ մանուածապատ յարաբերութիւններու խաղին մասնակից եղած ըլլան նաեւ Թուրքիան եւ Իսրայէլը: Պետք չէ անհամաձայնութիւն համարել, որ բոլորովին անձնական հողի վրայ օֆշորային հաշիւներու մեծ պարարտացումներ տեղի ունեցած ըլլան եւ ռուսեւտրայէճանա-

կան յարաբերութիւնները տարած բոլորովին նոր մակարդակներու: Այս մասին յստակ տեղեկութիւններ չկան եւ անոնք առայժմ կը պատկանին վարկածային ոլորտին: Բայց այդ ենթադրարհը անվիճելիօրէն գոյութիւն ունի մեր ներկայ աշխարհակարգին մէջ եւ ուր կը ճշտուին շատ մը ճակատագրեր: Ներառեալ՝ մերը: Զետեւաբար որեւէ երկրի յաջողութեան բանալին պէտք է փնտռել ոչ միայն տեսանելի աշխարհին մէջ, այլ նաեւ այդ իրականութիւնը սնուցող ենթադրարհներու:

Մէկ բան յստակ է: Ալիեւ իր յաղթանակը «գնեց» Մոսկուայէն, երբ 44-օրեայ Պատերազմը դեռ չէր իսկ սկսած: Եւ յստակօրէն տեղի ունեցաւ Ալիեւեան չարաշուք հրաշքը հազարաւոր հայ զինուորներու նահատակման գնով... Մեր ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿԻՑԸ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԶԱՆԿԱՐԾ ԴԱՐԻՑՑԱԿ ԳՈՐԾԵԼԷ ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ՇԱՅԻՐԵՆ ՄՐՈՒՄԸ: ՓՈԽԱՌԵՆԸ ԳՈՐԾԵՑ ԱՅՍՕՐ ԱՅՂ ՇԱՅԻՐԸ ՍԱՅՄԱՆՈՂ ՈՒԺԻՆ՝ ՄՈՍԿՈՒԱՅԻ ESTABLISHMENT-Ի ՇԱՅՄՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՕՆԸ, ԲԱՅՑ ԱՅԼԵԻՄ ԱԼԻԵՎԻ ԶԵՏ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ՊԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՆ ԱՌԱՋ ՆՈՐԴՈՒՄԸ:



Մենք պարտուեցանք ոչ թէ Ալիեւի ռազմական գերակայութեան դիմաց, այլ ռուս մեծապետական համակարգի ներքին երկուութեանց ՈՐՊԵՍ ԶԵՏԵՒԱՆԸ: Մոսկուա որոշեց չմիջամտել պատերազմի առաջին տասը օրերու ընթացքին եւ գիտակցաբար թոյլ տուաւ, որ մենք ընկղմինք: Ասկա կարելի չէ բացատրել միայն Փաշինեանական իշխանութեան ապիկարութիւններով: Իր ռազմավարական շահերով առաջնորդող Ռուսաստանը պիտի անպայման միջամտեր եւ գսպէր Ալիեւի յառաջխաղացքը... Այսպէս է, որ պիտի գործէր ռուս մեծապետական մեքենան: Այսպէս չգործեց: Այս բանը պէտք է յստակ եւ տրամաբանական բացատրութիւն ստանայ:

Մենք կորսնցուցինք լինելիութեան երաշխիք հանդիսացող բոլոր մեր ռազմավարական դիրքերը, որոնք գոյաւորուած էին աւելի քան երեսուն տարիներու արիւնով, քրտինքով եւ հանճարով: Անոնք գոյաւորուած էին երեսուն եւ աւելի տարիներու ռուս-հայկական ռազմավարական դաշինքով: Մոսկուան թոյլ տուաւ, որ մեր անվտանգութեան համակարգը փոշիանայ: Այդ համակարգը որքան հայկական՝ նոյնքան եւ ռուսական ռազմավարական շահերու խարիսխն էր տարածաշրջանին մէջ: Մենք փուլ եկանք որպէս պետականութիւն Մոսկուայի իսկ ուշադիր աչքերուն առջեւ եւ Մոսկուայի նախագիտութեամբ: Գործնականօրէն, Մոսկուան գործեց մեր եւ իր թշնամիի դիրքերէն: Ասկա մերկ փաստն է: Մենք տեղեակ չենք, թէ ի՞նչ քննարկումներ տեղի ունեցան Մոսկուայի քուլիսներու ետին այդ օրերուն: Կա՞ր բանակէ՞: Կա՞ր soul searching: Գիտենք մէկ բան: Զայ-ռուսական ռազմավարական դաշինքը իր փոխադարձ պիտանիութեան փորձաքննութիւնը չկրցաւ անցընել: Այսինքն՝ գործնականօրէն ան դարդեցաւ գոյութիւն ունենալէ հայ պետականութեան կեանքի ամբեն ճակատագրական վայրկեանին: Ինչո՞ւ: Մեզի կը պակսէր դոյզն նախատեղեկանքն (intelligence) իսկ իրերու դրութեան մասին: Պատերազմի նախօրեակին, Ալիեւ եւ Մոսկուա քաջ գիտէին, թէ ի՞նչ տեղի կ'ունենար, իսկ մենք կը գործէինք ամբողջական անտեղեկութեան պայմաններու մէջ: Եթէ ոչ ուրիշ բանի՝ այս աննեղի մեղքին իսկ համար պայման է, որ Փաշինեանական իշխանութիւնը պաշտօնանկութեան ենթարկուի եւ բերուի հանրային հաշուետուութեան:

Այսօր, յանկարծ Զայաստանի իշխանութիւնները համարձակութիւնը ունին Արեւմուտքը բերելու տարածաշրջանէն ներս որպէս ռազմավարական գործընկեր արհամարհելով հայ-ռուսական յարաբերութիւններու վաղուց հաստատուած կանոնակարգը: Ասկա ցուցանիշն իսկ է այն փաստին, որ Մոսկուայի կրաւորականութիւնը Կովկասի ռազմաբեմին վրայ դաշտը թողած է անտէր Արեւմուտքի եւ Թուրքիոյ առջեւ: Մոսկուա իր քաղաքականութեամբ հնարաւոր դարձուցած է ուժային պարապուրթան (power vacuum) մը ստեղծումը Կովկասի մէջ, որմէ ներս համարձակօրէն կը քալեն Արեւմուտքը, Իսրայէլն ու Թուրքիան եւ ի վերջոյ փանթուրքիզ մը:

ԶԵՓԻՌ Է. ԲԷԻՍԵԱՆ. «ՀԱՍԿՆԱԼԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԱՅՍՕՐ ՄԵՐ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ԿԵԴՐՈՆՄԵՆԱԼՈՒ, ԼԱՐՈՒՄԾ ԱՇԽԱՏԱՆՔ ՏՄՆԵԼՈՒ ԴԺՈՒՎՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՆ: ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐ ԿԱՐՕՏԻՆՔ ՄԵՐ ԲՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՎԵՐԱԳՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Երկրաշարժը ազդեց ինչպես մարդոց առօրեայ կեանքին, այնպես ալ կրթական մշակութային կառոյցներուն վրայ:

Երկրաշարժի առաջին օրէն իսկ, Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան որոշումով, աղետեալ բոլոր շրջաններու դպրոցները փակուեցան:

Ճեմարանը եւս իբրեւ դպրոց փակուեցաւ, սակայն իր դռները բացաւ շրջանի ժողովուրդին ապաստանը դառնալով Երկրաշարժի ահեղ օրերուն:

Այս առիթով «Գանձասար» յատուկ հարցազրոյց մը ունեցաւ Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի տնօրէն Զեփիւռ Էփեսեանի հետ:

«Գանձասար»- Ճեմարանի կառոյցը ինչպիսի՞ վնասներ կրեց Երկրաշարժին հետեւանքով, իսկ կրթական կեանքը տուժե՞ց այս մէկ ամսուան ճգնաժամային դադարին արդիւնքով:

Զեփիւռ Է. Բեիսեան. Ուսումնական այս տարեշրջանի բ. կիսամեակի սկզբնաւորութենէն երկու շաբաթ ետք, Հալէպ քաղաքը հարուածած Երկրաշարժի ահաւոր ալիքներու ցնցումէն անմասն չմնաց նաեւ կրթական համակարգը: Առաջին 1-2 օրերու կացութեան պարտադրանքով դասաւանդութեան ընդհատումէն ետք, Կրթական Տնօրէնութիւնը դասաւանդութիւնը վերսկսելու թուական յայտարարեց 13 Փետրուարը, այն դպրոցներուն համար, որոնց շէնքի ապահովութիւնը հաստատուած է յատուկ երկրաչափական-ապահովական խումբերու կողմէ:

Ճեմարանի պարագային, թէեւ երկու շէնքերն ալ կրեցին վնասներ, սակայն թէ շէնքի վերանորոգումը կատարած Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խուրհուրդի եւ թէ Ազգ. Վարչութեան յառաջացուցած երկրաչափական մասնագիտական խումբերու առաջին քանի մը օրերու կատարած ստուգումներէն ետք, հաստատուեցաւ, որ շէնքը ապահով է եւ կարելի է ընդունիլ աշակերտները, իսկ երկրաշարժին հետեւանքով երկու շէնքերու մէջ ալ յառաջացած ճեղքերն ու կարգ մը բաժիններու երեսպատման շարժած քարերու նորոգութիւնը յարմար նկատուեցաւ շրջան մը ետք կատարել, երբ նուազին գրեթէ ամբողջապէս յետցնցումները եւ շրջանը գտնէ իր համեմատական կայունութիւնը:

Կրթական Տնօրէնութեան ճըշդած թուականին դասաւանդութիւն վերսկսիլ կարելի չէր, տրուած ըլլալով որ Ճեմարանը Երկրաշարժի առաջին իսկ պահերէն դարձած էր ապաստան՝ ցնցումներուն սարսափը ապրող շրջանի բնակչութեան, որ նախընտրեց շրջափակի բացօթեայ տարածքին մէջ մնալ, անձրեւէն ու ցուրտէն պատսպարուելով

անձնական կամ ճեմարանի ինքնաշարժներուն մէջ կամալ գետնայարկի «Չարեհեան» սրահէն ներս: Առաջին քանի մը օրերուն ապաստանեալներուն մեծ թիւը օր ըստ օրէ նուազեցաւ, եւ որովհետեւ դպրոցի շրջափակէն ներս անոնց շուրջօրեայ ներկայութիւնը արգելք էր բնականոն դպրոցական կեանք սկսելու, աշխատանք տարուեցաւ իրենց բնակարանները վերադառնալու խնդիր ունեցող հայրենակիցները

նէլ իրենց հոգեկան խաղաղութիւնը:

«Գ.»- Նկատի առնելով աշակերտներու հոգեվիճակը, հոգեբանական խորհրդատուութեան յատուկ ծրագիր մը իր բարերար ազդեցութիւնը կրնա՞յ ունենալ աշակերտութեան վրայ:

Զ.Է.Բ. - Թէեւ դպրոցի անձնակազմը՝ հոգեբան-խորհրդատու, դասատուներ, դաստիարակներ թէ տնօրէնութիւն հաւաքական կամ



տեղափոխել «Սահակ Նալպաստեան» սրահ, որպէսզի կարելի ըլլար 21-22 Փետրուարին վերսկսիլ դասաւանդութիւնը:

«Գ.»- Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանը ինչպիսի՞ լրացումներով սկսաւ իրագործել կրթական ծրագիրը Երկար դադարէն ետք, նկատի ունենալով 9-րդ եւ 12-րդ կարգերու պետական քննութեանց կարելորդութիւնը եւ ուշացումներու բացասական ազդեցութիւնը ուսումնական կեանքին վրայ:

Զ.Է.Բ. - Դասաւանդման ծրագրի իրագործման իմաստով բնականաբար պետական քննութեան նախապատրաստուող 9-րդ եւ 12-րդ կարգերու պարագան առաջնահերթ տեղ գրաւեց: Դասատուներու հետ հանդիպումներով պատրաստուեցաւ նոր եւ խտացուած դասացուցակ, սակայն 20 Փետրուարի յետմիջօրէի երկրորդ ցնցումը շաբաթ մըն ալ կասեցուց դասաւանդութեան ընթացքը:

27 Փետրուարէն 3 Մարտ շաբթուան ընթացքին կարգ առ կարգ, օրական դրութեամբ աշակերտները վերադարձան դպրոց եւ 6 Մարտին Առաջնորդ Սրբազան Զօր օրինաբաշխ այցելութեամբ ու աղօթքով սկիզբ առաւ բնականոն դասաւանդութիւնը: Բնականոն բացատրութիւնը անշուշտ կը վերաբերի դրպրոցական առօրեայի կազմակերպման, որովհետեւ երկրաշարժի սարսափը ապրող աշակերտները այնքան ալ դիրաւ չէին կրնար վերադառնալ

մնացած սահմանափակ թիւով օրերուն աշխատանք պիտի տարուի իւրաքանչիւր կիւրի հիմնական եւ կարեւոր բաժինները անպայման դասաւանդել, բայց վստահաբար աշխատանք պիտի մնայ յառաջիկայ տարեշրջանին ալ: Որքան ալ ծրագրենք, ջանք թափենք ծրագրուածը իրականացնելու ուղղութեամբ, արդիւնքը - թէեւ նախատեսուած ակնկալուածք չէ: Հասկնալի պատճառներով այսօր մեր աշակերտները կեդրոնանալու, լարուած աշխատանք տանելու դժուարութիւն ունին եւ ինչպէս ըսի ժամանակի կը կարոտիւք մեր բնական վիճակը վերագտնելու համար: Այս միջոցին բնականաբար հոգեբանական աշակցութեան տարբեր միջոցներ ալ ձեռք առնուած են եւ պիտի շա-

րունակուին առնուիլ, յիշեալ ժամանակամիջոցի հարցերը նուազագոյնի իջեցնելու համար: Օրինակ՝ ԺԱ. կարգի պարագային, տարիքային այդ խումբի առանձնայատկութիւններու հաշուառումով, խտացուած դասընթացքով մը պիտի փոխանցենք երկրաշարժի վտանգին շուրջ իրազեկման, երկրաշարժի պահուն ճիշդ վարուելու կամ շտապ օգնութեան փութալու հիմնական գիտելիքներ: Նման եւ այլ նախաձեռնութիւններ ծրագրած ենք եւ յոյսով ենք, որ աստիճանական կայունացման ընթացքը կը պահպանուի եւ ապահով պայմաններով կը յաջողից բոլորել տարեշրջանը, իրագործել նաեւ դասաւանդման բացը լրացնելու մեր ծրագիրները:

«Գ.»- Շնորհակալութիւն սպանիչ տեղեկութիւններուն համար:
Հարցազրոյցը վարեց Ժիրայր Կարապետեան

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Գոնաօղլանեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՊԵՐՃՈՒՀԻ ԳՈՃԱՕՂԼԱՆԵԱՆԻ (Ծնեալ՝ ԳՐԻԳՈՐԵԱՆ)

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 26 Մարտ 2023-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին Եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին Եկեղեցոյ ներքնասրահը:



6 ՓԵՏՐՈՒՄ 2023 ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԵՒ ՀՈԳԵՇԱՐԺԸ ՀԱԼԵՊԱՀԱՅՈՒԹԵԱՆ



Կոմիտաս Ա. Քհնյ, Տարաղյեան

«Այս ինչ պատահեց հայոց աշխարհին,
Ողբերգութիւն է համաշխարհային,
Մի բուն ազգ էինք, դարձել ենք կէս բուն,
Իսկ այդ կէս բունն էլ արտասուք է լուռ»:

Ա. Սահակեան

6 Փետրուար 2023, թուական մը զարհուրելի...
Թուական մը, որուն ընթացքին բնութեան ուժը իր աղետալի երկրաշարժով պատճառ դարձաւ մարդկային, հոգեկան եւ նիւթական անհաշուելի վնասներու, իլից գոհեր ու խոր սուգի մատնեց ամբողջ տւրիահայրութիւնը, մանաւանդ՝ հալէպահայութիւնը:
Երկուշաբթի առաւօտ... օր մը սարսափազդու...
Օր մը, որուն ընթացքին մարդ իր տան մէջ հողակոյտի վերածուեցաւ:

ՏԵՐ ԿԵՑՈ ԴՈՒ ԶՅԱՅՍ...
Չէր բաւեր տասնամեակէ մը աւելի գաղութիւն փոթորկալից կեանքը, որ սկսաւ «Արաբական Գարուն»-ով, ապա պսակաձէ ժահրի համաճարակով, պատժամիջոցներով, որոնք երկիրս մատնեցին տնտեսական տագնապի. վրայ հասաւ աղետալի երկրաշարժը...: Վերոյիշեալ աղետներուն արդիւնքով ունեցանք նահատակներ, որբեր, այրիներ, առեւանգուողներ, երկրաշարժի զոհեր, քանդուներ եւ սըրտաբէկ հոգիներ:

Ոչ ոք կրնայ ըմբռնել աղետին պատճառած ահաւոր վնասները:
6 Փետրուարի առաւօտուն, այդ հոգեցունց պահերուն, պահ մը աչքիս առջեւ տողանցեց 35 տարի առաջ Մայր Զայրենիքի՝ Սպիտակի եւ Կիւմրիի ահաւոր երկրաշարժը, որ իլից 25 հազարէն աւելի



STUDIO VENUS

զոհ, արձանագրուեցան կորուստներ, վիրաւորներ, անդամահատուածներ եւ հազարաւոր բնակարաններու քանդում: Այդ օրերուն, հալէպահայութիւնը ձեռնածալ չմնաց, այլ փութաց օգնութեան իր վրձտահար եւ ցաւակոծ եղբայրներուն: Թէեւ աղետին ցաւը համամարդկային է, սակայն իւրաքանչիւր հայ պետք է առաւել զգայ իր ազգակիցին ողբերգութիւնը, ըմբռնէ աղետին տարողութիւնը եւ առաջին փութացողը ըլլայ անոր օգնութեան:

Այս ահաւոր աղետին առջեւ ի՞նչ պետք է ընել: Յուսահատի՞լ... երբե՞ք:

«Պիտի դիմանաս, իմ հայ՝ ժողովուրդ, դեռ պիտի յաղթես, ապրելով յաղթես. եւ նաեւ, նաեւ ծիծաղով յաղթես»:

Երկրաշարժէն ժամեր անց, մեր հոգեւոր պետերու պատուերով, եկեղեցական-ազգային իշխանութիւնը լայն բացաւ դռները եկեղեցիներու, սրահներու, դպրոցներու եւ ակումբներու որպէս օթեան ողջ հայութեան եւ նոյնիսկ տեղացի ժողովուրդին, անոնց սնունդ եւ կենցաղային բոլոր կարիքները ապահովելով, մինչեւ իսկ՝ բժշկական ծառայութիւն մատուցելով: Իսկ հոգեւոր պետերը հերթաբար գորակցական այցելութիւն կատարելով, աղօթելով, յորդորելով ժողովուրդը որ ապաւինի Աստուծոյ՝ երկնքի ու երկրի Տիրոջ, յիշեցուցին անոր պատուերը. «Մի՛ վախճար, միայն հաւատաւ ու պիտի ապրիս»:

Հայ ժողովուրդը անգամներ ապրած է մահերու մահը, բայց երբեք չէ կորսնցուցած ապրելու ոգին, տոկալու կորովը:

Հայ ժողովուրդը անգամներ ապրած է մահերու մահը, բայց երբեք չէ վախցած մահէն, այլ աւելին՝ մահէն անդին կեանքին նայելով՝ ապրելու կամքը պահած է իր մէջ՝ շնորհիւ իր անսասան հաւատքին, անբեկանելի կամքին եւ վեհ տեսլականին: Դարեր ամբողջ այսպէս ապրած ենք, պիտի ապրինք ու պիտի գոյատեւենք:

ԲԱՑՕԹԵԱՅ, ՓՈՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԻՄԱԳՐԱԲՈՂ ՆԱԼԵՊԸ



Լեւոն Վրդ. Եղիայեան

Բարեկամներու հետ խօսակցութեան ընթացքին, երբ Սուրիոյ մէջ վերջերս պատահած աղետը, ի մասնաւորի Հալէպ հայաշատ քաղաքէն ներս պատահածը կը քննարկէինք, առանց անդրադառնալու «բացօթեայ Հալէպը» արտայայտութիւնը ունեցայ: Այս ածականին բերնէ սպրդելուն պէս մտածումներուս հոսքը տեղատարափ անձրեւի նման ողորդեց ամբողջ Էութիւնս: Յուզմունքը եւ յուսահատութեան նշոյլները հազիւ թէ պիտի ազդէին հոգուոյս, երբ գլուխս թափահարեցի եւ Աստուածաշունչի բարձրադաղակ ձայնը եկաւ ականջիս. «Վստահեցէ՛ք Աստուծոյ, անկկա թոյլ պիտի չտայ որ ձեր կարողութենէն աւելի փորձուիք, այլ՝ փորձութեան մէջ իսկ ցոյց պիտի տայ զայն յաղթահարելու միջոցը, որպէսզի կարենաք տոկալ» (Ա Կրն 10:13):

Անմիջապէս գօտեպնդուած Աստուածաշունչի խօսքով, Աստուծոյ նախախնամութեան առաւել եւս փարեցայ եւ վստահութիւնը ունեցայ առ այն, որ Տէր Աստուած մեզ կ'ազատէ:

Քանի մը օր ետք, Աստուծոյ Ս. խորանէն Աստուածամօր բարեխօսութեամբ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը իր ժողովուրդին ըսաւ. «Եկած եմ ձեզի հետ ըլլալու»: Ի՞նչ գեղեցիկ արտայայտութիւն հօր մը կողմէ ուղղուած իր զաւակներուն: Պարզապէս խօսք մը չէր վեհափառ հօր արտասանածը, այլ բառին ամբողջական առու-



STUDIO VENUS

մով խոստում՝ ժողովուրդին հետ ըլլալու թէ՛ ուրախութեան եւ թէ՛ նեղութեան օրերուն: Իսկ նորընտիր Առաջնորդ Սրբազան Հայրը Սուրբ Զոգիէն առած շնորհներով, իմաստութեամբ եւ ամբողջական խոնարհութեամբ ու համեստութեամբ ժողովուրդին հետ ըլլալով կու տար «բաց ու բարի հովիւ»-ին պատկերը:

Փորձութիւններ, փորձանքներ, պատերազմներ, աղետներ, դժուարութիւններ... բառեր են, որոնք երբ կը լսէ մարդ արարածը, մարմինը կը փշաքաղուի եւ բերնէն դուրս կու գայ Աստուծոյ օգնութեան կանչը, ըսելով. «Աստուած մի՛ արասցէ: Տէրը հեռու պահէ»: Սակայն երբ այս բոլորը հաւատացեալին կը հանդիպին, պետք է իմանանք, որ Տէրը փորձութեան մէջ իսկ ցոյց կու տայ զայն յաղթահարելու միջոցը, որպէսզի կարենաք տոկալ (Ա Կրն 10:13):

Մեր Տէրն ալ չարչարուեցաւ, արհամարհուեցաւ, սակայն ի վերջոյ յաղթական դուրս եկաւ, յաղթեց չարին եւ ոտնակոխ ըրաւ սատանային ծրագիրները՝ մեզ տալով յաղթութեան հօր զաւակներ տիտղոսը: Կնքեց մեր հոգիները յարութեան դրոշմով եւ ազատեց մեզ յուսահատութեան ոգիէն: Հետեւաբար այն մեծ վստահութիւնը, որ ունինք Աստուծոյ վրայ, պիտի պահէ մեր հաւատացեալները ամեն տեսակի փորձութիւններէ: Սաղմոսերգուն կ'ըսէ, որ Աստուած պիտի դրկէ իր հրեշտակները, որպէսզի շալկեն հաւատացեալը, որպէսզի անոր ոտքը քարին չի գարնուի:

Սուրիոյ մեր ժողովուրդը, ի մասնաւորի հալէպահայութիւնը, շատ տուժեց վերջին տարիներուն: Սակայն եւ այնպէս իր մեծ հաւատքով եւ Աստուծոյ հանդէպ ունեցած մեծ վստահութեամբ, կը հաւատամ եւ վստահ եմ որ դարձեալ պիտի կանգնի, դարձեալ պիտի փայլի, դարձեալ պիտի ծաղկի եւ ինչպէս արեւամուտէն ետք արեւը դարձեալ կը ծագի, նոյնպէս պիտի ծագի հալէպահայութեան վրայ: Աստուծոյ ամպէ սիւները պիտի պաշտպանեն ու պահեն հալէպահայութիւնը:

Աստուծոյ Աջը պահէ մեր հայ ազգը իր ղեկավարներով եւ համեստ, սակայն վեհանձն, իմաստուն եւ հաւատացեալ ժողովուրդով:

Պրիսմակետ

ԱՄԷՆ ՕՐ



Մարուշ Երամյան

Տասնմեկ անձեր չուանով մը կախուր էին ուղղաթիռէ մը. բայց չուանը այնքան ալ ամուր չէր տասնմեկ անձեր կրելու չափ. իրենցմէ մէկը պետք էր ինքզինք սիրայօժար վար ձգէր, թէ ոչ բոլորը դատապարտուած էին իյնալու:

Չէին կրնար որոշել, թէ իրենցմէ ո՞վ պետք է սիրայօժար կերպով ինքզինք վար ձգէ, մինչեւ որ կինը սկսաւ խօսիլ եւ ըսաւ.

– Ես սիրով պիտի ձգեմ ինքզինքս, որովհետեւ, որպէս կին, վարժ եմ արդէն ամեն բան տալու ամուսինիս եւ ընտանիքիս համար, պատրաստ եմ գոհուելու, եւ ընդհանրապէս կը գոհուիմ, առանց փոխադարձ բան մը ստանալու:

Տասը մարդիկը մեծ խանդավառութեամբ սկսան ծափահարել ...

Կին մը միջոտ ալ կին է. ահա թէ ինչո՞ւ կը տօնենք Կիներու Զամաշխարհային օրը, Մարտ 8-ը:

Մարտ ամիսը հարուստ է տօնակատարութիւններով, եթէ ուզենք տօնակատարել անշուշտ. նախ կու գայ կիներու համաշխարհային օրը,



ապա՝ ուսուցիչներու օրը եւ ի վերջոյ մայրերու օրը. եւ եթէ նկատի առնենք, որ այս բոլորը, Նոյնիսկ ուսուցիչներու օրը կը կապուի կնոջ, – որովհետեւ անոնց մեծամասնութիւնը կին է, – կը տեսնենք թէ որոշ չափով Զայաստանի մէջ կ'արդարացուի Մարտ 8-էն Ապրիլ 7 կիներու ամիս յայտարարուիլը:

Կիներու համաշխարհային օրը ո՞ր կը տօնուի, ո՞ր երկիրներուն մէջ, արդե՞ք Զնդկաստանի, Քիւրտիստանի, – երկիրը պաշտօնապէս չկայ, այո, բայց ժողովուրդը կայ եւ իր ներկայութիւնը կը գգացնէ, – Պուրթանի, Թիպեթի կամ արաբիստանի մէջ այս օրը կը տօնուի, թէ՞ այս երկիրները նկատի չեն առնուիր եւ մարդիկը ... մարդ չեն հաշուընդուիր: Կամ ըսենք այսօր Արցախի եւ Ուքրաինայի մէջ այս եւ այլ տօներ կը տօնակատարուի՞ն:

Մարտ 8-ի գրառումներուն հետեւեցայ. բարեկամուհիներէս մէկը՝ Կարինէ Աւագեան գրեր էր.

«Տարիներու հեռուէն ականջիս կը հասնին այս երգին բառերն ու երաժշտութիւնը.

Վայ, մայրիկ ջան, գիտես որ
Մարտի 8-ն է հենց այսօր,
Վեր կա՛ց, գնա՛ միթիկի,
Յոգ մի՛ անիր դու իսկի.
Աբերկիս ճաշ կը տամ,
Զաւիկներին կուտ կը տամ ... եւ այլն:

«Սովետական կարգերու հաստատման սկզբնական տարիներուն ստեղծուած երգ մըն էր, Մարտ 8-ի մասին միակ երգը. միակն ալ մնաց: Ինծի կը թուէր, թէ այդ երգը խիզախ կանանց մասին է, իսկ միթիկի բառը կ'ընկալէի որպէս պատերազմ եւ լալով կը խնդրէի մօրմէս, որ միթիկի չէրթայ: Յետոյ հասկցայ որ միթիկը հանրահաւաքն է: Այդպէս էր որ միթիկի բառը մէջս որպէս կռիւ տպաւորուեցաւ, երբ արդէն մեծցեր էի եւ սկսեցի էի հանրահաւաքներու երթալ: Զիմա երբ հանրահաւաք բառը լսեմ, չեմ լար, պարզապէս ... կը յոգնիմ տարօրէն: Ա՛յ չեմ հաւատար այդ կռուին, պայքարին, պայքարողներուն, պայքարը առաջնորդող ճառասացներուն եւ ... նահանջողներուն ...»:

Ուրիշ սիրելի բարեկամուհի մը՝ Արփի Սարիբեկեան Նոյն առիթով կը գրէ դիմատետրի իր էջին.

«Անիծեալ պատերազմէն առաջ երբ այս տօնը կը շնորհաւորէի, սրտի կակիծով կը յիշէի այն ընկերուհիներս, որոնք կորսնցուցեր էին իրենց մայրերը եւ ինծի երանի կու տային, որ կրնամ տակաւին շնորհաւորել մայրս այս տօնին առիթով: Պատերազմէն ետք ... Այսօր միտքով կը գրկեմ բոլոր կիները, որոնց ամուսինները ա՛յլ պիտի չշնորհաւորեն զիրենք, կամ աղջիկները,

որոնց հայրերը երկինքէն պիտի շնորհաւորեն Մարտ 8-ը, եւ քոյրերը, որոնք եռաբլուրի մէջ ունին իրենց պաշտպանները ...

Երանի այս պատերազմը վերջինը ըլլար:

Այսօր եւ ասկէ ետք եկէ՛ք պահ մը գրկենք ծանր կորուստներ ապրած կիները եւ շնորհակալ ըլլանք այն խիզախ տղոց, որոնց շնորհիւ կ'ապրինք այսօր»:

Իսկ մտերիմ ընկերուհի մը՝ Անի Աստուրեան ելմակով գրեց.

«Այս առտու հետաքրքրական նկար մը ստացայ. սովետական շրջանի որմագրները կը յիշեցնէր, բայց «խօշ» էր. քիչ մըն ալ Ֆերնան Լեժէի պատահանները՝ ճարտարարուեստի յեղափոխութեան շրջանը ներկայացնող ... այդ ամէնը՝ հայ կնոջ ուժն ու նպատակասլաց միտքը ներկայացնելու համար: Բայց ուրիշներ ալ ստացայ. մէկը՝ Նուրբ, Նագանի, պարող հայուհիի նկարով, միւսը՝ լուսնի, ժպտուն, բամբասող ընկերուհիներով, միւսն ալ տառապած հայ կնոջ քնքուշ նայուածքով ... մտածեցի. «ահա այս բոլորն են ուրեմն ...»:

Մէկ տղամարդ միայն, որ շնորհաւորանքէ տարբեր բան գրեր էր դիմատետրի պատին.

«Եթէ Զայաստանի կիները դադրին աշխատանքէ եւ գործադուլ յայտարարեն միայն մէկ շաբթուան համար, տեսէք թէ ինչէ՛ր պիտի պատահին. բժշկական կեդրոններ, IT, պետական ծառայութիւններ ... բոլոր կեդրոնները որոնք կիներու վստահուած են շատ ատէջի, քան շատեր կ'անդրադառնան, տակնուվրայ պիտի ըլլան, լաւագոյն պարագային՝ պիտի դանդաղին, եւ այս՝ երկրի մը մէջ, որ յատուկ «համբաւ» ունի կիներուն առնչութեամբ (կը յիշէ՞ք այն բազմաթիւ պատմութիւնները իրենց ամուսիններուն կամ կետուրներուն ծեծին տակ սպանուած, կամ չսպանուած բայց տառապող կիներուն): Այս իրողութիւնը Մարտ 8-ը ինծի համար ամենէն նուազ սիրուած տօնը կը դարձնէ: Զակասակ ասոր՝ զօրաւոր մնացէ՛ք եւ ձեր գեղեցիկ ժպիտը անթառամ պահեցէ՛ք ...»:

Խիստ արական մաղթանք մըն է ասիկա՝ «ձեր գեղեցիկ ժպիտը անթառամ պահեցէ՛ք». ինչպէ՞ս, երբ իւրաքանչիւր օր իր հետ ծանր կամ թեթեւ հարցեր ու տառապանքներ կը բերէ կիներուն համար: Բայց կինը ունի՛ կարողութիւնը «իր գեղեցիկ ժպիտը պահելու», եւ ա՛յդ է իր գլխաւոր զօրութիւնը:

Ոչ միայն Զայաստանի, այլ ուրիշ շատ երկիրներու մէջ նաեւ, կինը որքա՛ն ալ «հաւասարութիւն» կամ իրաւունքներ ստացած ըլլայ, կը մնայ այն էակը, որ միջոտ պատրաստ եղած է տալու, Նուիրուելու, եւ մնացեալ բոլոր փոքր ու մեծ տառապանքները լռութեամբ եւ ժպիտով տանելու. ա՛յս իրողութեան համար միայն կ'արժէ տօնել օրը եւ շնորհաւորել կիները, անոնք իմանան թէ ոչ, ծաղիկներ եւ շնորհաւորանք ստանան թէ ոչ:

Ինչպէս որ մայր ըլլալը կնոջ բնագոյն էական մէկ մասն է, Նոյնպէս ալ ուսուցիչ ըլլալը խառնուածքի, ընտրութեան եւ սիրոյ հարց է. թէ՛ մայրերը, թէ՛ ուսուցիչները ինչ որ կ'ընեն, կ'ընեն առանց հատուցում կամ գնահատանք սպասելու. եւ ճիշդ հոն է անոնց ոյժն ու զօրութիւնը:

Միակ մտածումը, որ կ'իշխէ վրաս ամէն տարի այն է, որ մենք, կիներս պետք ունի՞նք այսքան շնորհաւորանքներու, որովհետեւ կը կարծեմ թէ բոլորս ալ պիտի նախընտրենք, որ իւրաքանչիւր օր տօնելու առիթ ըլլայ շրջապատին համար, ոչ թէ ծաղիկներով, նուէրներով եւ խօսքերով, այլ պարզապէս դրական վերաբերմունքով, որովհետեւ չենք գիտեր թէ վաղը ի՞նչ պիտի բերէ. թերեւս գալ տարի այս տօներէն ո՛չ մէկուն հասնինք, եւ զոքում ստեղծենք մեր սիրելիներուն համար: Ա՛յդ իսկ չենք ուզեր ընել՝ ամենափոքր ժխտական ապրումը ներշնչել մեր սիրելիներուն ...

Թող ձեր իւրաքանչիւր օրը տօն ըլլայ ձեզի համար, սիրելի՛ կիներ, մայրեր, ուսուցչուհիներ, ոչ միայն ծաղիկներով եւ նուէրներով, այլ մանաւանդ ձեր գաւակներուն եւ աշակերտներուն վերաբերմունքով:

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԿԱՉՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլպօշեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Վրաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլպօշեան
Զաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:

- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:

- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:

- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:


- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

ԱՍՏՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՊԱԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ



Դոկտ. Զրաչ Պարսումեան


«Մոլորակաբան» Ֆրենք Յուկերը պիտի յեղափարծել մեկուսի երեւոյթ չէ: Կը պատկանի այսպէս կոչուած «Յամպուրկի դպրոցին», որուն հիմ-



նադրական մատենանք կը տեսնենք կողքի նկարին մէջ: Դասագիրքը (339 էջ) հրատարակած է Ալպերթ Վիթթի սան եւ ժամանագործ Ռ. Էլփրըթին (1901 - 1988) իր ուսուցիչի... անձնասպանութենէն ետք (1941): Գիրքին նոր հրատարակութիւնը կը վաճառուի համացանցի վրայ (1):

Պատմական. - Նախքան 18-րդ դար՝ աստղաբանութիւնը (Astro-logy) անջատուած չէր աստղագիտութենէն (Astronomy), որ կը համարուէր թէ՛ յարգարժան եւ թէ՛ անհրաժեշտ մասնագիտութիւն: Երկնային մարմինները ցոյց կու տային տարուան ժամանակը: Այդ կենսական էր եւ նստակէտք երկրագործական հաւաքակառուութիւններու եւ քոչուոր ցեղախումբերու համար: Երկնային մարմինները յաճախ կը նոյնացուէին դիցերու հետ: Մարդիկ կը յուսային երկինքէն յղումներ ստանալ: Երկնային «թաքնագրուած» յղումները վերծանելու աստակ էին միայն տաճարներու մէջ պատրաստուած աստղաբանները: Իշխանաւորներ այդ մարդոց խորհուրդին կը դիմէին կարեւոր որոշումներ (ինչպէս՝ արշաւանք) տալէ առաջ:

Աստղաբանութիւնը ունեցած է օգտակար հետեւանքներ: Երկրակեդրոն դրութեան տեր Պլտ-



դումեսու (100-170 ՅՁ) պատրաստած է իր ժամանակուան ամենաճշգրիտ քարտեզը, որպէսզի կարենայ որոշել, թէ տուեալ անձը ո՞ր աստղի տակ ծնած է: Աստղաբաններ էին նաեւ բազմաթիւ հետազայ ականաւոր աստղագետներ, ինչպէս՝ Էրատոսթէսը: Արեւմտեան աստղագիտութեան ակունքը Բաբելոնն է: Այս նիւթին նախապէս անդրադարձած եմ (2):

Եզրակացութիւնները հիմնուած էին զանազան համաստեղութիւններու, արեւու, լուսնի եւ տեսանելի հինգ մոլորակներու դասաւորումին ու շարժումներուն վրայ: Կողքի պատկերը ցոյց կու տայ Սեւակի աւագանին մէջ գտնուած ՆՁ 11-12 դարու պատկանող պրոնզեայ թերթ մը: Երկրի մօտիկ երկու մոլորակներ (շատ հաւանաբար՝ Արուսեակ եւ Յրատ) ցաւօք կորսուած են:

Աստղաբանական դրոյթները եւ բառամթերքը մշակոյթի մաս կազմած էին: Այդ կարելի է տեսնել գործերուն մէջ ականաւոր հեղինակներու, ինչպէս՝ Շեքսպիր եւ Միլթըն: Աստղաբանութիւնը նոյնիսկ գրոհած է լեզուէն ներս: Լատիններէն սերած իտալերէնի (եւ ոչ միայն) մէջ

«disastro» (սխալ աստղ) կը նշանակէ «աղետ»:

Միեւնոյն համաստեղութիւնը տարբեր մշակոյթներու կողմէ կ'ընկալուի տարբեր կերպով: Կարիճի քցանները յոյները տեսած են որպէս կշիռք: Ամերիկայի բնիկները Մեծ արջը տեսած են որպէս արօր եւ այլն:

Մոլորակներուն վերագրուած յատկութիւնները ի հարկէ որեւէ առնչութիւն չէին կրնար ունենալ անոնց ֆիզիքական կառոյցին հետ: Այժմ գիտենք, օրինակ, որ սեր եւ գեղեցկութիւն մարմնացնող Արուսեակը (Վեներա) իսկական դժոխք մըն է, ուր իր հեղձուցիչ (ածուխի երկթթուակ CO2) մթնոլորտն ի վար մոլորակը ծածկող թանձր ամպերը ծծումբի թթու (Sulfuric Acid) կը տեղան եւ + 480 սելսիուս ջերմաստիճանը աւելի քան բաւարար է հալեցնելու կապարը եւ նոյնիսկ գինկը: Յրատ, որ առնչուած է պատերազմի ահեղ աստծու (Մարս, Martius) հետ, անապատային սառ-

ՄՈԼՈՐԱԿ	ԶԱՆԳՈՒԱԾ Բաղդատած Երկրի	Լուսագաղտի (ԱՄ) Կեռատրութիւն	ձգողութիւն (%) Բաղդատած Լուսնի
Լուսին	0.0123	0.0026	100
Փայլածու (Mercury)	0.0553	0.61	0.08
Արուսեակ (Venus)	0.815	0.28	0.56
Հրատ (Mars)	0.107	0.52	0.02
Լուսնթագ (Jupiter)	318	4.2	0.97
Երեւակ (Saturn)	17.1	29	0.001

նամանիք թողուց մըն է, որուն կարմրաւուն գոյնը հետեւանքն է գինք ծածկող աւազի բաղադրութեան եւ գրեթէ չգոյ մթնոլորտի (3):

Յրատ առնչուած է աստղագիտական արտասովոր երեւոյթի մը «յետադարձ» (retrograde) շարժումի հետ: Պարզ բացատրութիւնը այն է, որ արեւու շուրջ դառնալու մեր արագութիւնն է մօտ 30քմ/երկվարկէան, իսկ Յրատի՝ մօտ 24 քմ/երկվարկէան: Երբ մենք կ'անցնինք Յրատի կողքէն, կը թուի, թէ մոլորակը դէպի ետ կը շարժի: Այս կը պատահի մօտ 26 ամիս պարբերութեամբ (4): Մենք այդ տպաւորութիւնը յաճախ կ'ունենանք, երբ մեր կողքի ինքնաշարժը (կամ շոգեկառքը) մեզմէ քիչ մը դանդաղ կը շարժի: Կողքի գծապատկերը պարզացուած ձեւով ցոյց կու տայ Յրատի շարժումը «անշարժ» աստղերու խորապատկերին վրայ: Աւելի հեռու մոլորակներու պարագային, այս երեւոյթը պարզ աչքով նկատելի չէ:

Երկնային մարմիններու յետադարձ շարժումը կը համարուէր չարագոյժ: Չարագոյժ կը համարուէր նաեւ խաւարումը: Ի տարբերութիւն այլ բանդագուշանքներու՝ այդտեղ կայ ճշմարտութեան որոշ բաժին: Խաւարումները կը պատահին երբ արեւը, լուսինն ու Երկիր մոլորակը կը գտնուին նոյն ուղիղ գիծին վրայ: Արեւու եւ լուսնի ձգողական ուժերը ուղղակի կը գումարուին: Ծանօթ է, որ արեւու խաւարումի ընթացքին տեղի կ'ունենայ աւելի բարձր մակընթացութիւն: Յաշուարկը, սակայն, կարելի չէ կատարել հասարակ թուաբանութեամբ (arithmetic), որովհետեւ երեք մարմինները պտոյտի մէջ են եւ անոնց ձգողութիւնները նաեւ կը պատճառեն ոչ միայն ձեւափոխում (ինչպէս՝ մակընթացութիւն), այլ նաեւ՝ կեդրոնաձիգ (centripetal) արագացում:

Մերօրեայ Աստղաբանը. - Ֆրանք Յուկերը պիտի իր հաշուարկներուն մէջ բնագիտական սկզբունքներ չի ներառեր: Այդ օրինակաւի է, որովհետեւ աստղաբանութիւնը փակ (hermetic) մարզ մըն է: Անոր օրինակափոխութիւնները եւ սկզբունքները «անժամանցելի» են, որովհետեւ կը գըտնուին գիտութենէ դուրս: Գուշակութիւնները տակաւին հիմնուած են այն հինգ մոլորակներուն

վրայ, որոնք տեսանելի էին հազարամեակներ առաջ (4):

Մոլորակներու առնչուած միակ դաշտը ձգողութիւնն է: Մագնիսական դաշտը կը յառաջանայ էլեկտրական լիցքերու շարժումով: Աննշան են: Մոլորակները մեծ քանակութեամբ գուտ (net) էլեկտրական լիցք չեն կրնար ունենալ: Որեւէ լիցք շատ արագ պիտի չէզոքացուի: Տիեզերքի եւ մեր Ծիրկաթինի մէջ դրական եւ բացասական լիցքերու քանակը հաւասար է: Յուկերը պիտի կ'ակնարկէ մագնիսական դաշտերու հաւանաբար, որովհետեւ այդ օրերուն մագնիսականութիւնը տակաւին առնչուած էր ոգեղէն երեւոյթներու: Մարդոց վրայ մոլորակներու մագնիսական ներգործութեան շուրջ աղմուկ բարձրացուցած ամենականաւոր դէմքն է գերմանացի բժիշկ Ֆրանց Մեսմեր (1734-1815), որուն անունով մկրտուած է քննածութիւնը (mesmerisation=hypnosis): Կողքի գծանկարին մէջ կը տեսնենք անոր ենթադրեալ ցուցադրութիւններէն մին: Թէ ինչո՞ւ ունեցած է արտասովոր յաջողութիւն եւ մեծ ժողովրդակալութիւն, հարցում մըն է, որուն կարող են պատասխանել ընկերաբաններն ու հոգեբանները: Ըստ իս, տագնապներու եւ անորոշութեան մէջ տուայտացող մարդու համար գրաւիչ է երկինքէն եկող հաւաստի յղումը:

Ինչպէս վերը նշած էի, միակ երկնային մարմինը, որ աստակ է Երկիր մոլորակի մակերեսին վրայ ազդեցութիւն ունենալ, լուսինն է, որովհետեւ անհամեմատ աւելի մօտ է մեզի: Կողքի տախտակը ցոյց կու տայ մոլորակներու ձգողական ուժի բաղդատականը: Եթէ նոյնիսկ բոլոր մոլորակները դասաւորուին նոյն ուղղութեամբ (երեւոյթ մը, որ մօտաւորապէս, ոչ ճշգրտօրէն պիտի պատահի... 2492 թուին), ապա անոնց համատեղ ձգումը պիտի հաւասարի լուսնի ձգումի լոկ 1,6 ան անգամ, այսինքն՝ 60 անգամ նուազ: Մոլորակները որեւէ ֆիզիքական դէպ չունին՝ որպէս երկրաշարժ խթանող ազդակ: Անոնք կրնան խթանել միայն ոմանց երեւակայութիւնը:

Ճարտարագիտութեան Վնասները. - Յին օրերուն հարկ էր, որ հեզ աստղաբաններ տընէին որոշելու համար երկնային մարմիններու դիրքերը անցեալին, առաւել եւս՝ ապագային: Այժմ այդ գործողութիւնը կը պահանջէ քանի մը երկվարկէան: Յամացանցի վրայ ծրագրէն հասանելի են նման կայքէջեր: Տես, օրինակ, <https://www.theplanetstoday.com/>: Յուկերը պիտի հաւանաբար կը գործածէ անոնց մէկ տարբերակը:



Վերի պատկերին մէջ դեղին ուղիղ գծով նշուած երեք երկնային մարմիններու (լուսին, հզօր Լուսնթագ եւ Փայլածու) համընկնումի (conjunc-



ԱՍՏՂԱԲԱՆՈՒԹԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 8

tion) յայտնաբերումը ինձմե պահանջեց ևուագ քան հինգ վայրկյան: Կը մնա վերծանել, թե ի՞նչ կը նշանակե երկնային այս յղումը, արդեօք ջրհեղե՞ր, թե՞ տողարի գահավե՞տ անկում: Առաջինը անշուշտ որ աւելի հաւանական է:

1755 թուականի «Halloween» իրիկուան ժամը շուրջ 10:00-ին հզօր 7+ երկրաշարժ մը կործանած է Լիզպոնը եւ իւլած՝ քանի մը տասնեակ հազար կէտեր: Երկրաշարժին հետեւած է ցունամի, որ կործանած է Նաւահանգիստն ու Նաւերը, ապա՝ համատարած հրդեհ, որ մոխրացուցած է թանգարաններ եւ արուեստի անգին գանձեր: Յետցնցումները շարունակուած են քանի մը ամիս:

Հալոուին, ի հեճուկս «Ամենայն սրբոց» վերանուանումին, կը շարունակե մնալ հեթանոսական դիմակաւոր ծես «քարնավալ», ուր մարդիկ կը պայքարին այդ գիշեր ազատ սաւառնող ոգիներու դէմ: Կործանող երկրաշարժի գուգադիպութիւնը այդօրուան չէր կրնար անտեսուիլ աստղագուշակներու կողմէ:

Միամիտ փորձ. - Ինքնագարգացումի նպատակով փորձեցի հետեւիլ այդ երկրաշարժի վերլուծումին: Հարկ է որոշել, թե աղթարքի ո՞ր «տան» մէջ կը գտնուին տուեալ մոլորակները: Շատ արագ պարզ դարձաւ, որ արեւմտեան աստղաբանութեան մէջ «ճշգրիտ» գուշակութիւն կատարելու համար կարելի դասաւորումներու թիւը այսպիսով կը դառնայ աստղաբաշխական (5): Համացանցի վրայ կան կայքէջեր, ուր իբր թե բացատրուած են «գիտական» աստղաբանութեան օրէնքները (6): Երեք օր տքնելէ ետք համոզուեցայ, որ իմ ունեցած թուաբանական պատրաստութիւնը չի հեզ աստղաբաններ օգնել վերծանելու «Անկիւնադարձային» կամ «վտանգաւոր երկրաչափութիւն» (Հուկըրպիթի բարբառով critical geometry) համարուող դասաւորումներու բնոյթը: Առանց կեղծ համեստութեան՝ այդ կը նշանակե, որ մարդոց աւելի քան 99,8 առ հարիւրին համար անոնք անվերծանելի, ուրեմն եւ անհասկնալի են: Կողքի գծապատկերին մէջ վտանգի աստիճանը ներկայացուած է կարմրաւուն գիծերով: Նման գծապատկեր պատրաստելու համար անհրաժեշտ է իւրաքանչիւր դասաւորումի համար որոշել քանի մը քանակական արժեք (երկրաշարժ, Նիւթոնական բարօրութիւն, պատերազմ, սեր եւ այլն): Այդ արժեւորումը ակնայտ է ոչ մէկ աստղաբանին համար:

Ո՞ր է թաղուած շան գլուխը. - Հանելուկին պատասխանը ստացայ պատահաբար: Պրպտումներու ընթացքին սկսայ հանդիպիլ բազում ծանուցումներու, որոնցմէ մին տեղադրուած է Նոյնիքն Հուկըրպիթի յօրինած աստղաբանական հաստատութեան (Solar System Geometry Survey-SSGEOS) կողմէ: Աւելի խօսուն եւ բացայայտ են, սակայն ականաւոր աստղագետ-աստղաբաշխ Քեփլըրի անունը կրող ընկերութիւնը եւ անոր նմանները: Անոնք մատչելի գումարներով (ինչպէս՝ 300 տոլար) համակարգչային ծրագիրներ, դասագիրքեր եւ դասընթացներ կը ներառեն: Աստղաբանութիւնը փակ (esoteric) մարզ է: Ժամանակորոշն է երբեմնի ընդմերու դրպրութիւններուն, որոնք դիտմամբ այնպէս մեծնագրուած էին, որ անկիւնալի ըլլան հասարակ ժողովուրդին: Դպրութեան ծանօթանալու համար հարկ է աշակերտել ընդմիջ մը: Այս օրերուն՝ ի հարկէ վճարովի: Կայ այլ առիթ: Կարգ մը «գիտականներ» պետութենէն նպաստ կը պահանջեն կատարելու համար երկրաշարժը նախատեսող ուսումնասիրութիւններ եւ սարքեր ստեղծելու համար: Իմաստուն գաղափար չէ՞ քանի մը հազար, կամ Նոյնիքն միլիոն տոլարի ներդրում կատարել՝ խուսաբելու համար աղէտ մը, որ անասելի աւեր եւ թշուառութիւն կը պատճառէ:

Հուսկ բանք. Աստղաբաշխներ անմիտ մարդիկ չեն, այլ՝ մարդիկ, որոնք կը շահագործեն անմիտները: Ծանօթ ենք տեղացի կնոջ մը, որ ամէն Ամաւորի գուշակութեան հազարաւոր հաստափոր գիրքեր կը վաճառէ: Գիրքեր, որոնք մէջ ոչ մէկ աներկբայ նախադասութիւն կարելի է գտնել: Այդ օրինակաւ է: Գուշակութիւնը երբեք յստակ եւ իմանալի չէ եղած: Բիւր մշուշապատ թելադրութիւններէն մէկն ու մէկը կրնայ հետագային թարգմանուիլ որպէս գուշակութիւն: Մեծանները ի սկզբանէ եղած են դրամաշորթ խաբէութեան բոյներ: Ինծի ծանօթ ամենէն վառ օրինակն է յունական Տելֆի (Ապոլոն աստուծոյ) բարգաւաճ տաճարը, որ իրերայաջորդ վերականգնումներով գործած է աւելի քան ութ դար:

Աստղագուշակութիւնը «պիզնես» մըն է, որ կը սնանի տգէտ մարդոց սնտոխապաշտութեամբ: Տուգափեղկի մէջ կը գետեղուին համակարգիչներ ու գծագիրներ՝ գիտականութեան պատրանք ստեղծելու համար: Հաղորդակցութեան միջոցները պետք չէ արտօնեն, որ Հուկըրպիթս եւ իր նմանները կառուցեն մերօրեայ Տելֆիի տաճարը:

- 1- Հեղինակը անձնասպան եղած է, երբ իր անծանօթ մոլորակներու գոյութեան դրոյթը ձաղկի ենթարկուած է աստղագետներու կողմէ: Այժմ Պոլոտոնը մոլորակ կը համարեն միայն գուշակները:
- 2- «Բաբելոնեան բարդ ալիքներ եւ հայկական ցաւոտ մակաբերում», «Ազգակ», 26 փետրուար 2021:
- 3- Հրատի, ինչպէս եւ լուսնի գանգուածները բաւարար չեն կազերը իրենց շուրջ պահելու: Երկիրը, ցաւօք, իւրաքանչիւր օր 90 թոն օդ կը կորսնցնէ:
- 4- Ոմանք կը հաւատան, որ այդ իմաստութիւնը, որ ժամանակուած է ծովամոյն Աթլանթիկի գերակայ քաղաքակրթութենէն եւ կամ Նոյնիքն բարեմիտ այլմոլորակայիններէ:
- 5- 9 մոլորակ x 12 ամիսաբարձի տուն = 108 դիրք: Այդ դիրքերէն 9-ը (մոլորակներու թիւը) կարելի է իրարու հետ կապել աւելի քան 380 000 000 000 000 000 000 ձեւերով:
- 6- Տես, օրինակ, https://aztro1.com/education/planetary_geometry.htm

ԻՆՉՊԵՍ...

Սկիզբ՝ էջ 4

Բոլոր վերլուծումները ցոյց կու տան, որ Արեւմուտքի շահագրգռութեան կիզակետը տարածաշրջանին մէջ Հայաստանը չէ. Իրանն է: Հայաստանը կոչուած է ծառայելու որպէս այդ քաղաքականութեան գործիքը: Արեւմուտքը վաղուց ընտրած է այս ուղին եւ այդ մէկը այսօր ենթակայ չէ փոփոխութեան: Եթէ Արեւմուտքը յանկարծ յաջողի իրականութեան վերածել իր առաջադրութիւնները Կովկասի մէջ, Ռուսաստանը կը չէզոքացուի տարածաշրջանի բեմին վրայ, Իրանը կ'իյնայ քառսի մէջ եւ թուրքաւարպէյճանական ուժը կը տիրապետէ Կովկասին: Եւ Վրաստանն ու Հայաստանը կը մնան թուրքիոյ քմահաճոյքին: Պարզ չէ՞, թե ինչպիսի աղէտ է ռուսական ուժի լուծարումը Կովկասի բեմին: Աղէտ՝ առաջին հերթին՝ Հայաստանի, Արցախի եւ հայութեան համար:

Գաղտնիք չէ, որ Արեւմուտքը կը վարէ Ռուսաստանը տկարացնելու քաղաքականութիւն Կասպեան տարածաշրջանին մէջ: Բայց ան միշտ եղած է այդ դիրքերուն վրայ եւ պիտի շարունակե ըլլալ: Այստեղ նորութիւն մի փնտռէք: Եւ Մոսկուա միշտ ալ կրցած է առանց դժուարութեան քաշել իր կարմիր գիծերը եւ հաւասարակշռութիւնը (միշտ ի նպաստ Ռուսաստանի) հաստատել Կովկասը պահելով իր ազդեցութեան ծիրին մէջ որպէս աշխարհաքաղաքական տիրոյթ: Ի՞նչ փոխուեցաւ յանկարծ, որ Ռուսաստանը մղուի իր ներկայ կրաւորականութեան: Ինչո՞ւ յանկարծ Նախ. Փութին անհրաժեշտ համարեց համաձայնագիր ստորագրելու Ալիեւի հետ (Փետր. 23, 2022) պարտաւորուելով, որ Կովկասի հետ առընչուող խնդիրներու պարագային Ռուսաստան պիտի առաջնորդուի Արաբիանի գերագոյն շահերով:

Այս կնճռոտ կացութեան մէջ, պարզ է, որ մենք, որպէս անկախ պետականութիւն, իրաւունք չունինք պարտաւորուիլ անպատիւ դիրքերէն գործելու եւ այս քառսային պայմաններուն ենթարկելու մեր երկիրն ու մեր ժողովուրդը: (ա) Մենք իրաւունք չունինք Փաշինեանի պարտութեան համակարգը պահելու իշխանութեան դիրքերուն վրայ: Այդ համակարգը վիշխական է իր բնոյթով եւ պետք է դուրս դրուի ամէն գնով: ՊԵՏԸ Ե ԴՈՒՐՍ ԴՈՒՌԻ ԱՅՍՕՐ ԻՍԿ: (բ) Մենք իրաւունք չունինք հանդուրժելու թշնամիի ուժերու ներկայութիւնը մեր հողին վրայ: Թշնամին պետք է գիտնայ, որ իր գիտարարներու կրունկները ՀՀ սահմաններէն ներս պիտի պատժուին ամենէն դաժան ձեւով: (գ) Թշնամին պետք է գիտնայ, որ Արցախի անկախութիւնը ենթակայ չէ սակարկութեան եւ իր կողմէ պարտադրուած ներկայ շրջափակումը անպայման պիտի արժանանայ համապատասխան հակադարձութեան: ԱՌԱԻԵՒԼ: Թշնամին պետք է յստակօրէն գիտնայ, որ Շուշին, Հաղորթը, Զարվաճառը, Լաչինը եւ միւս գրաւեալ տարածքները կը պատկանին հայ պետականութեան հողային ամբողջականութեան: (դ) Մենք իրաւունք չունինք ձգձգելու հայկական ռազմուժի վերականգնման իրամայական ծրագիրը: (ե) Եւ հայ քաղաքական միտքը պիտի ընդունի, որ մենք իրաւունք չունինք Հայաստան-Ռուսաստան յարաբերութիւններու ոլորտը յանձնելու թշնամիի տնօրինութեան:

Այսօրուան մեր մեծագոյն մարտահրաւերն է վերականգնել Հայաստան-Ռուսաստան գործընկերութիւնը իր արժանապատիւ չափանիշներով: Այո՛, այս բոլորէն ետք տակաւին մենք պարտաւորուած ենք Մոսկուան ընտրելու որպէս մեր կենսական շահերու կիզակետը... Մեր գործն է Մոսկուան վերըստին «խլել» թշնամիին ճանկերէն եւ մեր բաժինը ապահովել Մոսկուայի ուժականութիւններէն: Ի վերջոյ պիտի հասկնանք, որ Ռուսաստանը ոչ մեր թշնամին է, ոչ ալ՝ մեր բարեկամը: Ռուսաստանը մեր կենսական զենքն է եւ մեր պարտաւորութիւնն է այդ զենքը ձեռք բերել ամէն գնով: Մենք իրաւունք չունինք Մոսկուան գիշելու Ալիեւին: Եւ այսօր այս հարցը դրուած է մեր առջեւ իր վախճանական բացարձակով:

Մենք «ԹԱՆԿ ՀԱՃՈՅԸ»-Ը ՉՈՒՆԻՆՔ ԸՍԵԼՈՒՄ ՈՐ ԱՅՂ ՄԵԿԸ ԱՆԿԱՐԵԼԻ Ե ԱՅԼԵԼԻ: Մենք ՊԵՏԱՊՈԼԻՏԻՍԸ ԵՆՔ ԳՏԱԵԼՈՒ ԱՅՆ ԼՇԱԿՆԵՐԸ, ԱՅՆ ԳԵՐՈՒՄԸ, ԱՅՆ LEVERAGE-Ը, ԱՅՆ ԵՐԿԱԹԵԱՅ ՇԵՐԻՓԸ, ՈՐ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵ ԱՆՀՐԱՄՇԵՑ ՀԱԻՄԱՐԱԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԻ ՈՒՇԻՆ ԱՂԻՄԱԿԻՆ ՄԵՋ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ ԴՆԵԼՈՎ ԲԱՆԱԿՑՈՂԻ ԱՌՈՂՋ ԵՒ ԱՐԺԱՆԱՊԱՏԻ ԴԻՐԵՐՈՒՄ ԿՐԱՅ: ՆՏԱՐԻ ՎՐԱՅ Ե ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԱՅԼ ԸԱՏ ԱԻԵԼԻՆ: ՆՏԱՐԻ ՎՐԱՅ Ե ՄԵՐ ԱՉՊԱՅԻՆ ՀԱԲԱՔԱԿԱՆ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ: Եթէ ԱՉԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆԸ Ի ՎԻՃԱԿԻ ՉԷ ԸՍՏ ԱՐԺԱՆՈՅՆ ԳՆԱՀԱՍՏԱՏԱՆ ՏԱԼՈՒ ԱՅՍ ՕՐՀԱՍՏԱՏԱՆ ԶԳՆԱԺԱՄԻՆ, ՌԱՅՎԻՐԱՆԵՐՆ ԵՆ (ԵՒ ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ՝ ՀԱՅ ՅԵՐԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ), ՈՐՈՆՔ ԱՆՅԱՊԱՐ ՊԻՏԻ ԻՋՆԵՆ ԱՍՊԱՐԵՋ ՄԵՐ ՆԱԻԸ ԻՐ ՆԵՐԿԱՅ ԸՄՀԻՃԵՆ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ԵՒ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԵՐ ՏԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ԱՅՍ ԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵՋ:

ԵԿԱՃ Ե ԺԱՄԸ ԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԿՈՉՈՒԹՅՈՒՆ ԶԵՆՔԵՐՈՎ: ԿՈՎԿԱՍԸ ԹՇՆԱՄԻՆ ԶԱՆՁՆՈՒԹՅՈՒՆ ՏԵՍԵԼՈՒ ԳԱՐԱՓՈՐԸ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆ: ԲՈՒՐ ԱՆՈՆԸ, ՈՐՈՆՔ ԱՅՂ ԶԱՐԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆԵՐՆ ԵՆ ՏԱՐԱՃԱՐՉԱՐԱՆԻ ՄԵՋ ԻՆՔԱՐԵՐԱԲԱՐ ԿԸ ԳՏՆՈՒՆ ԹԸՆԱՄԻ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՄԵՋ: ՄԵՇԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏԱՆ «ՈՂՋՍՏՈՒԹԵԱՆ» ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԱՅՍՕՐ ՓԱԿՈՒՐԱՅԻՆ ԵՆ ՄԵՉԻ ՀԱՄԱՐ ԵՒ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ՝ ՆԵՐԿԱՅ ԸԳՆԱԺԱՄԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ: ՌԱՅՎԻՐԱՆԵՐԸ ՊԻՏԻ ԳՈՐԾԵՆ ՓԱԿՈՒՐԻՆԵՐԸ ՊԱՅԹԵՅՆՈՂ ՌԱՉՄԱՎԱՐՈՒԹԵԱՄԸ ԵՒ ԿԱՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ: ԿԸ ԳՏՆՈՒՆՔ ՆՈՐ ՎԵՐԵԼՔ ԶԵԻՄԻՐԵԼՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՐՏԱՐԱԽԵՐԻՆ ԱՌՋԵՒ ԿԵՆԱՅ ՄԱՀՈՒ ԴԱՏԱԿԻՈՎ:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ՎՍՏՂԵՐԸ

Խոյ
Նոր ձեռքբերումներու եւ լայնածաւալ փոփոխութիւններու շրջան մը կը սպասէ ձեզի: Յաջողութեամբ իրենց աւարտին պիտի հասնին ձեր բոլոր գործերը:

Ցուլ
Անհրաժեշտ է, որ կարենաք ճշգրիտ ձեռով սահմանել առաջնահերթութիւնները: Գործի նոր առաջարկ մը պիտի ստանաք: Մի՛ մերժէք զայն եւ վստահութեամբ յառաջացէ՛ք:

Երկուորեակ
Շաբաթը յաջողակ եւ բարեկամատե է ձեզի համար: Անհրաժեշտ է, որ ձեր հմտութիւնները բարելաւէք եւ գիտելիքներ ամբարեք: Հանդիպում մը պիտի ունենաք հաճելի անձի մը հետ:

Խեցգետին
Նիւթական գետնի վրայ մեծ յաջողութիւն մը պիտի ունենաք այս շաբաթ: Սիրող մէջ ալ գոհացում պիտի ստանաք: Բախտը պիտի ժլպտի ձեզի:

Առիծ
Դուք պետք է յաճախ պայքարիք երջանիկ եւ յաջողակ ըլլալու համար: Բոլոր յաջողութիւններուն բանալին աշխատասիրութիւնն է: Ձեր նիւթական վիճակը կայուն է:

Կոյս
Գործերու բարեկամատե ընթացք մը պիտի ունենաք, որ գոհունակութիւն պիտի պատճառէ ձեզի: Մարդոց հետ ձեր յարաբերութիւնները պետք է կանոնաւորէք եւ նիւթականի խնայողութիւն կատարէք:

Կշիռ
Անհրաժեշտ է, որ շինարար գրոյցներ վարէք: Ճիշդ ու դրական վերաբերմունքը մարդոց հետ շատ յաջող դրներ կրնայ բանալ ձեր առջեւ: Ձեր գործընկերներուն աւելի հասկացողութիւն ցուցաբերեցէ՛ք:

Կարիճ
Արագորէն որոշումներ մի՛ կայացնէք: Նոր ծանօթութիւններ պիտի հաստատուէ մարդոց հետ, որոնք պիտի առաջնորդեն ձեզի նոր նուաճումներու: Աւելի բարի ու նուրբ եղէ՛ք ձեր սիրելիներուն հետ:

Աղեղնաւոր
Խնդիրներու եւ անախորժ դեպքերու պարագային ձեր ընկերներուն օգնութեան դիմեցէ՛ք: Սիրային նոր արկածախնդրութիւն մը պիտի ունենաք: Համբերատար եղէ՛ք:

Այծեղջիւր
Աւելի քրտնաջան պետք է աշխատիք լաւ արդիւնքի հասնելու համար: Պետք է մտածէք մարդոց հետ լաւ յարաբերութիւններ հաստատելու մասին: Ձեր աշխատանքի ծաւալը պիտի աւելնայ: Ուշադրութիւն դարձուցէ՛ք ձեր սիրելիին:

Ձրիս
Բարձրունքները նուաճելու համար անհրաժեշտ է աշխատանք տանիլ բոլոր ուղղութիւններով: Այդ աշխատանքը մարդոց գովասանքին պիտի արժանանայ եւ պտղաբերի: Աւելի ուշադրութիւն դարձուցէ՛ք ձեր սիրելիին:

Ձուկ
Առանց դադարի ու յապաղումի ձեր գործերը կատարեցէ՛ք: Ձեր բոլոր գաղափարները աշխուժութեամբ արտայայտեցէ՛ք եւ գործի լծուցէ՛ք: Հաճելի ծանօթութիւններ պիտի ունենաք ձեր գործին մէջ:



ԳԱՐՆԱՆ ԲՈՅՍԵՐՈՒՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Բնութիւնը ուրախացաւ եւ արթնցաւ ձմրան երկար քունէն: Աճեցան կանաչ խոտը եւ գարնան առաջին ծաղիկները:

Արեւուն մեղմ ճառագայթները պայծառ լոյսով կը տաքցնեն Հալեպ քաղաքը:

Արեւուն տաք շողերն ալ արթնցուցեր են Հալեպ քաղաքի ծառերը, իսկ գեղեցիկ մակնուխան որ կը իրճուի Մարտի կիսուն տալով իր ծաղիկները՝ գրաւած է անցորդներուն հիացումը: Շատ մը վայրերու մէջ արդէն կը ծաղկին աքաւիաներ, կեռասենիներ, ծիրանիներ եւ այլ ծառեր: Բոլոր բողբոջները նոր են՝ կը պատրաստուին ծաղկաբոյլեր դառնալու:

Առաջին գարնանային միջատները կը սողան իրենց թաքստոցներէն:

Թռչունները ուրախ-գուարթ կը ճռուողեն:

Բնութեան գարթօնք է եւ ամեն տեղ անուշաբոյր կանաչը կը խորհրդանշէ նոր կեանք, երիտասարդութեան եւ գեղեցկութեան յաղթանակ:

Կեցցէ՛ գարունը:

Բոյսերն ալ շնչող էակներ են, Աստուծոյ ստեղծագործութիւններ են, որոնք թթուածին արտադրելով կը ստեղծեն առողջ մթնոլորտ մը:

Անոնք կը կազմեն մարդկութեան անուշիկ կարեւորագոյն մէկ բաժինը:

Մենք կ'օգտուինք բոյսերու բոլոր բաժիններէն: Անոնք մէջ կը գտնուին հիւթեր եւ նիւթեր, որոնք կ'օգտագործուին անուշահոտեր պատրաստելու, իսկ բժշկական գետնի վրայ բոյսերը կը բաժնուի հիւսկ խումբերու:

1-Բոյսեր, որոնց տերեւները կ'օգտագործուին, ինչպէս՝ անուխը, ռեհանը, թմբին եւ այլն...



Լեռնավարդ

2-Բոյսեր, որոնց ծաղիկները կ'օգտագործուին, ինչպէս՝ յասմիկը, վարդը եւ այլն...

3-Բոյսեր, որոնց կողմերը եւ կուտերը կ'օգտագործուին, ինչպէս՝ կասիան...

4-Բոյսեր, որոնց հունտերը եւ կուտերը կ'օգտագործուին, ինչպէս՝ անիսոնը, քիմիոնը, շումրան եւ այլն...

5-Բոյսեր, որոնց արմատները կ'օգտագործուին, ինչպէս՝ սուսը, շողգամը, բողկը, ստեպիկը եւ այլն...

Բոյսերով զբաղիլն ու գանոնք խնամելը հաճելի եւ օգտակար ժամանակ մըն է, մանաւանդ երբ կը ստանանք անոնց արդիւնքը:

Անոնք կը գարդարեն մեր բնակարանները եւ գործատեղիները, ինչպէս նաեւ մեր պարտեզները:

Եթէ մեր տան մէջ բոյսեր պիտի պահենք, պետք է գետեղենք զանոնք պատուհանին մօտ՝ օգտուելու համար արեւուն լոյսէն: Սենեակը մուրթ ըլլալու պարագային, հարկ է օգտագործել էլեկտրական հոսանքը:

Սենեկային բոյսերը մեր տուններուն կը պարգեւեն հանգստութիւն: Անոնք կը նպաստեն տան գեղեցկութեան, բարեբար ազդեցութիւն կ'ունենան մեր առողջութեան եւ ջղային դրութեան վրայ: Սենեկային բոյսերու ներկայութիւնը եւ անոնց խնամքը խթան կը հանդիսանան կարգ մը հիւանդութիւններու բարելաւման, մանաւանդ որ կը հանգստացնեն կանանց ջղային համակարգը: Անոնք իրենց թթուածին արտադրումով կը ստեղծեն առողջ կենսոլորտ մը, որուն այնքան պետք ունին քաղաքի ապակեանած օդին մէջ խեղդուած տուններն ու բնակարանները: Սենեկային բոյսերը կը բարձրացնեն մեր տրամադրութիւնը եւ կը թեթեւցնեն ընկճախտը:

Ամենակարելորդ այն է, որ սենեկային բոյսերը դրական ազդեցութիւն կը գործեն մեր միտքի կեդրոնացումին վրայ, կը բարձրացնեն աշխատանքի արտադրողականութիւնը: Անոնք կը պահպանեն օդի խոնաւութեան մակարդակը:

Այս բոլորին իրագել դառնալէ տեք, չ'արժե՞ր շրջապատուիլ սենեկային բոյսերով, որոնք կը նպաստեն մեր կեանքի բարելաւման:

Ուստի՝ մեր խոհանոցը կրնանք գարդարել լեռնավարդով: Ան իր գեղեցիկ եւ վարդագոյն ծաղիկներով ոչ միայն գեղեցիկ տեսք կու տայ, ալ նաեւ կը կլանէ օդի թունաւոր նիւթերը, որովհետեւ իր մէջ կը պարունակէ բնական միջոց մաքրութեան համար:

Մարդիկ վեցիազար տարիէ ի վեր ննջասենեակները կը գարդարեն ալեւ վերայով: Եգիպտոսի մէջ այն յայտնի էր՝ որպէս անմահութեան ծաղիկ: Ան գիշերը թթուածին կարտադրելու կը կլանէ ածխաթթու կազերը:

Հիւրասենեակի մէջ Պենճամին թթենին կը խոնաւցնէ օդը եւ գեղեցիկ տեսք կու տայ սենեակին:

Աշխատասենեակին մէջ կռափուշը (քակթիւս) միւս բոյսերէն աւելի լաւ կը կլանէ համակարգիչի էլեկտրամաքնիսական ճառագայթները:

Արիեստալոնցի մէջ կարելի է օգտագործել շուշանը, որ թունաւոր նիւթերը շատ արագ կը մաքրէ:

Հետեւաբար գարնան հետ նոր գոյն ու թարմութիւն պարգեւեցէ՛ք ձեր կեանքին ու բնակարանին:



Կռափուշ

Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԻՅԱՆ ՍՈՒՐԻՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ փինկ փունկի կրտսերներու ակումբէն, Հալէպի Աքաբ խումբի խաղացող Յովիկ Միսաքեան Սուրիոյ հաւաքականին հետ մեկնեցաւ Իրաք, իր մասնակցութիւնը բերելու Իրաքի բարեկամական եւ արեւմտեան Ասիոյ մրցաշարքին:

- Սուրիոյ պասքեթի դաշտութիւնը հրապարակեց իր ցուցակը պասքեթի բոլոր տարիքներու եւ խումբերու մրցաշարքերուն, որոնք վերջին շրջանին դադարած էին երկրաշարժին հետեւանքով:

- Հալէպի Իթթիհատ Ահլի ակումբը ֆութպոլի Ա. խումբի մարզիչ Նշանակեց Հունէյն Աֆաշը, որ պիտի փոխարինէ հրաժարեալ մարզիչ՝ Մահեր Պահրիին:



ՀԱՅԿԱԿԱՆ

ԷԼՄԻՐԱ ԿԱՐՎՊԵՏԵԱՆ՝ ԵՐՈՂԱՅԻ ՀՐԱՁԳՈՒԹԵԱՆ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼԱԿԻՐ

Եսթոնիոյ մայրաքաղաք Թալլինի մէջ ընթացող գնդակային հրաձգութեան Եւրոպայի առաջնութեան Հայաստանը ներկայացնող Էլմիրա Կարապետեան դարձաւ պրոնզէ մետալակիր:



Ըստ Հայաստանի հրաձգութեան դաշտութեան տեղեկութիւններուն, օդամղիչ ատրճանակ ձեռք 10 մետր - 60 կրակոց վարժութեան ան ապահովելով 577 կետ, 59 մասնակիցներու մէջ գրաւեց 3-րդ դիրքը եւ մուտք գործեց

կիսաեզրափակիչ փուլ: Այնտեղ հայ մարզուհին վաստակեց 250 կետ եւ պահեց 3-րդ հորիզոնականը: Յիշեցնենք, որ Էլմիրա Կարապետեան 2022 թուականի աշխարհի առաջնութեան մրցումներուն ձեռք բերաւ Փարիզ-2024 Ողմպիական խաղերու ուղեգիրը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՆԵՅՄԱՐ ԾՈՒՆԿԻ ԾԱՆՐ ՎԼԱՍՈՒՄՔԸ ՍՏԱՅԱՐ

Ֆրանսական Փարիզ Սան Ժերման խումբի պրագիլիցի, յարձակողական խաղացող Նէյմար աջ ծունկի վիրահատութեան ենթարկուեցաւ: Այս մասին տեղեկութիւններ յայտնեց Լ'Equipe-ը: Նէյմարի ծունկի վիրահատութիւնը կատարուեցաւ Քաթարի Նշանաւոր հիւանդանոցներէն մէկուն մէջ 10 Ապրիլին: Աւելցնենք, որ 19 Փետրուարին տեղի ունեցած Ֆրանսայի առաջնութեան 24-րդ փուլի «Լիլի» հետ կայացած խաղին, Նէյմար ստացաւ ծունկի ծանր վնասուածք, որուն հետեւանքով ան այս տարի պիտի չկարենայ շարունակել մրցաշարքը եւ հեռու պիտի մնայ դաշտերէն շուրջ 4 ամիս: Այս տարեշրջանին ան ֆրանսական խումբին հետ մաս կազմեց 29 հանդիպումի, նշանակելով 18 կոլ եւ կատարելով 17 կոլային փոխանցում:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 430)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2		■									■	
3					■			■			■	
4		■					■					
5				■							■	
6								■				
7		■	■	■	■	■			■		■	
8									■			■
9			■		■			■				
10	■		■	■	■	■						
11	■					■	■			■		
12												

Հորիզոնական

- Ասացուածքը կ'ըսէ: «.....ը մեզի կու գայ այն ատեն, երբ գայն ուրիշներուն համար կը փնտռենք»:
- Այն կիսը, որուն Պետրոս առաքեալ Յոպպէի մէջ յարուրիւն պարգեւեց:
- Կրկնուած բաղաձայններ: Անձնական դերանուն: Յոգնակերտ մասնիկ:
- Անասունի սատակ: Համարում, յարգ:
- Հակառակ՝ առաջին կիսը: Ռաֆֆիի երկերէն՝ «Ոսկի»:
- Խոտորիլ, շեղիլ: Հակառակ՝ տարածքի միաւոր:
- Եական բայ:
- Կեանքի մը կարելոր հանգրուանի յիշատակութիւն: Հակառակ՝ տառի մը անունը:
- Տառի մը անունը: Աղբիւր: Սրբուհի մը:
- Անձնական դերանուն: Թագաւոր:
- Վնաս, քանդում: 7001: Հակառակ՝ շաղկապ:
- «Միջնորդ Տեր Պապան» երգիծական վեպին հեղինակը (անուն մականուն):

Ուղղահայեաց

- Մեռելներուն վրայ լացող կին:
- Հակառակ՝ շաղկապ: Ձայնաւոր տառեր: Տարածքի միաւոր:
- Խողխողել, սպանել: Հակառակ՝ յապաղած:
- Ամուսինը մեռած կին: Լծկան ընտանի կենդանի: Ծաղկապ:
- 450: Տարածքի միաւոր: Արական անուն:
- Ասացուածքը կ'ըսէ: «.....ի կու գանք մեզի տրուածներով, բայց կեանք մը կը ստեղծենք մեր տուածներով»: Հայկական մականուններու վերջավանկը:
- Մէկը: Փոքր ալիք:
- 7400: Կրկնուած բաղաձայններ: Արական կրճատուած անուն:
- Նաւավար: Բիծ:
- Փոքրացնող մասնիկ: Աղերսանք, պաղատանք:
- Յոգնակերտ մասնիկ: Հակառակ՝ կտակ:
- Սեղմ, խիտ: Մատթեոսի Աւետարանի 5-րդ գլխուն մէջ գրուած է. «Ձեր Այո թող ըլլայ եւ Ոչը՝ Ոչ: Անկէ աւելին չարեն կու գայ»:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 429)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	խ	ա	ն	բ	ա	ն	ա	կ	ն	վ		
2	օ	ր	ա	պ	ա	հ	ի	կ	ե	ա		
3	ս	տ		ա	գ			ն	ա	ն	հ	ր
4	ք	ա	ր	տ	է	ս			յ	ր	ա	
5	հ	կ		մ		ր		խ	ն	դ	հ	ր
6	ա	ղ	ա	ե	լ	ա		ի	կ			
7	ճ	ր	ա	գ	ա	լ	ո	յ	ց	ո	ւ	
8	ա	գ		ի	մ			ը	թ	ւ		
9	տ			ր	ա	խ			ա	ն	ի	
10	ր	ա	մ		ր	ս		ա	կ	ք		
11	ա	ր	ե	ն	ա	կ	ի	ց	ա	ս	ր	
12	կ	ա	ր	օ	ս	ա	ս	ո	ւ	ն	ի	

ԼՈՒՐԻՅԱ

Երևուեցւոր 20/3 9° 17°	Երեբեցւոր 21/3 8° 17°	Չորեբեցւոր 22/3 9° 13°	Հինգեցւոր 23/3 11° 19°	Ուրբաթ 24/3 10° 21°	Շաբաթ 25/3 12° 23°	Կիրակի 25/3 11° 21°
--	---	--	--	---	--	---

ՅԵՏ ԵՐԿՐԱՆԱՐԺԻՆ, ՍՐԲԱՉԱՆ...

ՎՍԿԻՊԻՆ Էջ 1

կանութեան ատենապետ տղթք. Մինաս Պալեանի եւ Թաղականութեան անդամներու, Ազգ. Սրբոց Նահատակաց վարժարանի Յոգաբարձութեան, Տնօրէնութեան եւ Պատկան Մարմինին հետ: Ան մօտէն հետաքրքրուեցաւ երկրաշարժին հետեւանքով յառաջացած նիւթական վնասներով, իրագել դարձաւ երկրաշարժի հետեւանքներու դիմագրուման համար տարուող աշխատանքներով, գօտեպնդեց, աղօթեց, ուժ եւ կորով մաղթեց ազգայիններուն՝ ծառայելու համար ժողովուրդին: Ապա, սրբազան հայրն ու ազգայինները հանդիպեցան Ազգ. Սրբոց Նահատակաց վարժարանի աշակերտութեան հետ, հոգաբարձութեան եւ տնօրէնութեան ներկայութեամբ: Սրբազան Հայրը խրախուսեց աշակերտները՝ յոյսով եւ լաւատեսութեամբ շարունակելու ուսումնական իրենց կեանքը:



Այնուհետեւ, սրբազան հայրն ու ազգայինները ուղղուեցան դէպի Զեսապ, ուր այցելեցին Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ճեմարան եւ շերմապետ դիմաւորուեցան Զեսապի հոգեւոր տեսուչ հոգ. Տէր Անդրանիկ Վրդ. Զիւրիմեանի, Զեսապի Թաղականութեան ատենապետ տիար Վիգէն ԼՆՊԵՆԻ եւ Թաղականութեան անդամներու, Պատկան Մարմինի, Ճեմարանի Յոգաբարձութեան, տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտներուն կողմէ:



Սրբազան հայրը իր հայրական օրհնութիւնները փոխանցելով խրախուսեց աշակերտները, անոնց պատուիրելով, որ չվախնան երկրաշարժէն, իրենց հաւատքը գօրաւոր պահեն եւ աշխուժութեամբ իրենց ուսումնական կեանքը շարունակեն: Աշակերտները կենսունակութեամբ երգ մը եւ Սուրիական Հայրենիքի քայլերգը երգեցին, որմէ ետք Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով հանդիպումը փակուեցաւ: Սրբազան Հայրը պատուիրականութեամբ շրջեցաւ մանկապարտեզի դասարանները, ապա տնօրէնութեան սենեակէն ներս հանդիպում ունեցաւ Ճեմարանի պատասխանատուներուն հետ, ուր մօտէն ծանօթացաւ Ճեմարանի պատմութեան, ներկայ իրավիճակին եւ գօտեպնդեց Ճեմարանի պատասխանատուները՝ լաւատեսութեամբ շարունակելու իրենց վստահուած առաքելութիւնը: Ճեմարանի Յոգաբարձութեան ատենապետը Սրբազան Հօր նուիրեց «Հարիւրամեակ՝ Զեսապի Ուսումնասիրաց Ընկերութեան եւ Նոյնանուն Երկրորդական Վարժարանին» եւ Հայկազ Թրթռեանի հեղինակած «Զեսապի Պատկան Յանրապետութիւնը» գիրքերը: Հանդիպումի աւարտին կարկանդակի հատում տեղի ունեցաւ, երկրաշարժի աղետէն ապահով դուրս գալու առիթով:



Անկէ ետք, ներկայները ուղղուեցան դէպի Զեսապի Ս. Աստուածածին եկեղեցի, ուր հայր սուրբին եւ թաղականութեան կողմէ սրբազան հոր ցոյց տրուեցան երկրաշարժին հետեւանքով եկեղեցւոյ կառոյցին կրած տարբեր վնասները եւ բացատրութիւններ տրուեցան: Ապա, ներկայները ուղղուեցան եկեղեցւոյ «Սահակեան» սրահ, ուր երկրաշարժէն ետք տեղի կ'ունենան եկեղեցւոյ բոլոր արարողութիւնները:



Ապա, Սրբազան Հայրը պատուիրականութեամբ մեկնեցաւ Արամօ գիւղ, ուր այցելեց Ս. Ստեփանոս եկեղեցի, որ երկրաշարժէն վնասուած է: Սրբազան հայրը դիմաւորուեցաւ տեղւոյն պատասխանատուներուն եւ համայնքի գաւակներուն կողմէ եւ բացատրութիւններ ստացաւ եկեղեցւոյ վնասներուն մասին՝ ճարտարապետ Աբրահամ Ճապալուրի կողմէ: Մակար Սրբազան խրախուսեց ժողովուրդը եւ աղօթեց՝ հայցելով Ամենակալին պահպանութիւնը: Ապա ան մեկնեցաւ Արամոյի Ս. Գեորգ պատմական մատուռ, ինչպէս նաեւ փոյլ եկած Ս. Աստուածածին ուխտատեղի:

Սրբազան հոր հովուական այցելութիւնը եզրափակուեցաւ: Ղնեմիէ այցելութեամբ: Տէր Մակար այցելեց Ս. Գեորգ եկեղեցի, ուր դիմաւորուեցաւ Թաղականութեան ատենապետ Վահէ Արիճանի եւ տեղւոյն ժողովուրդի գաւակներուն կողմէ: Եկեղեցւոյ մէջ Սրբազան Հայրը գօտեպնդեց եւ քաջալերեց հաւատացեալները եւ «Տէրունական աղօթք»-ի արտասանութեամբ անվտանգ օրեր մաղթեց անոնց:

ՀՅՂ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ...

ՎՍԿԻՊԻՆ Էջ 1

տուններուն հետ՝ իմանալու աղետի տարողութիւնն ու ժողովուրդին կարիքները: Ծիշող է, որ տարբեր երկիրներու մէջ կ'ապրինք, բայց վերջին հաշուով մէկ ժողովուրդ ենք: Այնպէս ինչպէս սուրիահայութիւնը մեր տազնապնդութիւնը ընթացքին մեզի կը հասնէր, մենք ալ մեր կարգին օժանդակութեան մեր բաժինը բերինք: Անմիջապէս գործի իրաւիւրեցինք մեր Արտակարգ Իրավիճակներու Մարմինը, որուն մաս կը կազմեն կուսակցութիւնը, Լիբանանահայ Օգնութեան Խաչը եւ ուղեկից միւս միութիւններն ու համապատասխան աշխատանք տարինք կարելի բոլոր միջոցներով մարդասիրական



օժանդակութիւն ապահովելու: Կը յուսանք, որ սուրիահայութիւնը այս դժուարութիւնները կը յաղթահարէ եւ ժպիտը կրկին կ'ուրուագծուի բոլորի դէմքին»:

Ազգային մարմիններու ներկայացուցիչ Վրեժ Եագուպեան բարձր գնահատեց լիբանանահայ գաղութին այս ներդրումը: Ապա անցցուց. «Աղետի առաջին օրէն, ինչպէս բոլոր հայ գաղութները, այնպէս ալ ՀՅՂ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը կապի մէջ մտաւ եւ պատրաստակամութիւն յայտնեց օժանդակելու մեր ժողովուրդին: Սուրիահայութիւնը պատերազմի օրերէն մինչեւ այսօր դժուար օրեր կը դիմագրուէ: Յուսանք այս աղետը վերջինը կ'ըլլայ, եւ Սուրիոյ ու Լիբանանի ժողովուրդները բար-



ւրջ օրեր կը դիմաւորեն: Ընտրիակալութիւն լիբանանահայութեան»:

Այնուհետեւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Եպս. Ազգարեան ժողովականութեան եւ ամբողջ ժողովուրդին անունով շնորհակալութիւն յայտնեց ՀՅՂ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին եւ լիբանանահայութեան այս կեցուածքին համար՝ դիտել տալով, որ «սուրիահայութիւնը անցնող մէկ ամսուան ընթացքին ապրեցաւ սարսափելի օրեր: Թեմի Արտակարգ Իրավիճակի Մարմինը եւս գործի լծուեցաւ ամոքելու ժողովուրդին ցաւը եւ կազմակերպելու օժանդակութեան աշխատանքները: Թող Աստուած իր հովանիին տակ պահէ Սուրիոյ եւ Լիբանանի ժողովուրդները»:

Ապա Սուրիոյ Երիտասարդական Միութեան անդամները փոխադրակառքը բեռնաթափեցին եւ օժանդակութիւնը տեղափոխեցին Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահ, որպէսզի յառաջիկայ օրերուն տրամադրուի մեր ժողովուրդի գաւակներուն:

Օժանդակութիւնը կ'ընդգրկէր հանդերձ, սննդեղէն եւ մանկական շորեր:

նոր այցելեց Ս. Ստեփանոս եկեղեցի, որ երկրաշարժէն վնասուած է: Սրբազան հայրը դիմաւորուեցաւ տեղւոյն պատասխանատուներուն եւ համայնքի գաւակներուն կողմէ եւ բացատրութիւններ ստացաւ եկեղեցւոյ վնասներուն մասին՝ ճարտարապետ Աբրահամ Ճապալուրի կողմէ: Մակար Սրբազան խրախուսեց ժողովուրդը եւ աղօթեց՝ հայցելով Ամենակալին պահպանութիւնը: Ապա ան մեկնեցաւ Արամոյի Ս. Գեորգ պատմական մատուռ, ինչպէս նաեւ փոյլ եկած Ս. Աստուածածին ուխտատեղի:

Սրբազան հոր հովուական այցելութիւնը եզրափակուեցաւ: Ղնեմիէ այցելութեամբ: Տէր Մակար այցելեց Ս. Գեորգ եկեղեցի, ուր դիմաւորուեցաւ Թաղականութեան ատենապետ Վահէ Արիճանի եւ տեղւոյն ժողովուրդի գաւակներուն կողմէ: Եկեղեցւոյ մէջ Սրբազան Հայրը գօտեպնդեց եւ քաջալերեց հաւատացեալները եւ «Տէրունական աղօթք»-ի արտասանութեամբ անվտանգ օրեր մաղթեց անոնց:

Արամօ եւ Ղնեմիէ այցելութիւններուն սրբազան հոր միացաւ ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսութեան խորհրդական-հիւպատոս Բաբգէն Պատալեան: